# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

***Մոնիտորինգի և գնահատման***
***Տարեկան***
***հաշվետվություն***

**(Հունվար – Դեկտեմբեր 2015թ.)**

**2015թ.**

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| ԱՀՌԾ | Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր |
| ԱՄԳ | Աղքատության մասնակցային գնահատում |
| ԱՊ | Աշխատանքային պլան |
| ԲՊԿՉՆ | Բնական պաշարների կառավարման և չքավորրու թյան նվազեցման ծրագիր |
| ԳԶՄՀ | Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ |
| ԶԼՄ | Զանգվածային լրատվամիջոցներ |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՕՖ | Հայ Օգնության Միություն |
| ՀՍՆՀ | Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ |
| ՀՏԶԾ | Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր |
| ՄԱԿ | Միացյալ Ազգերի Կազմակերպություն |
| ՄԱԶԾ | Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագիր |
| ՄԶԳ/ՏՏԶԾ | Միջազգային զարգացման գործակալություն |
| ՄԶԾ | Մարզային զարգացման ծրագիր |
| ՄԶՆ | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարություն |
| ՍԾՏԳ | Սոցիալական ծառայության տարածքային գործակալություն |
| ՏԱՊ | Տարեկան աշխատանքային պլան |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| ՓՄՁ | Փոքր և միջին ձեռներկատիրություն |
| ՓՄՁ ՄԶԽ | Փոքր և միջին ձեռնարկատիրության մարզային զարգացման խորհուրդ |
| ՓՄՁ ԶԱԿ | Փոքր և միջին ձեռնարկատիրության Զարգացման Ազգային Կենտրոն |

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը Գեղարքունիքի Մարզային Զարգացման Ծրագրի (ՄԶԾ) մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն է 2015թ. հունվար – դեկտեմբեր ամիսների համար: Հաշվետվությունը պատրաստվել է Գեղարքունիքի մարզպետարանի մոնիտորինգի խմբի կողմից՝ ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի շրջանակում: Այս հաշվետվությունը արձանագրում է տարվա ընթացքում մարզում գրանցված առաջընթացը:

## 1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը

2012թ.-ի մարտի 1-ին ՀՀ կառավարության N308-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությաքն Գեղարքունիքի մարզի 2012-2015 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը, որը հանդիսանում է ՀՀ կառավարության աղքատության հաղթահարմանն ուղղված գործունեության բաղկացուցիչ մասը:

ՄԶԾ-ի ընդհանուր նպատակն է հաղթահարել եկամտային և մարդկային աղքատությունը՝ խթանելով մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը հետևյալ ոլորտներում՝ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացում (ՓՄՁ), Գյուղատնտեսություն, Բնապահպանություն, Սոցիալական հատված (առողջապահություն, կրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն), Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն և ենթակառուցվածքներ (ճանապարհաշինություն, ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում և քաղաքաշինություն):

Մարզային զարգացման ծրագրի մշակման մեթոդաբանությունը հիմնված է այն պարզ սկզբունքի վրա, որ մարզային զարգացման ծրագիրն արձանագրել է մարզի տնտեսական ու սոցիալական վիճակը, ըստ ոլորտների կարևորագույն հիմնախնդիրները, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունները: Մարզային զարգացման ծրագիրը նպատակ չունի արձանագրել առանձին ծրագրեր ու միջոցառումներ: Վերջիններս արտացոլվելու են տարեկան աշխատանքային պլաններում:

Գեղարքունիքի ՄԶԾ-ն մշակվել է մարզային իշխանությունների և քաղաքացիական հասարակայնության լայն մասնակցությամբ՝ ,,Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի,, շրջանակներում:

Գեղարքունիքի ՄԶԾ-ում հիմք է ընդունելով ԱՀՌԾ-ի սկզբունքները և ռազմավարությունը, նպատակ է հետապնդում բացահայտել մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշել աղքատության հաղթահարման ռազմավարությունը և համապատասխան միջոցառումները 2012-2015թթ-ի համար:

Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- բնակչության եկամտային և մարդկային աղքատության կրճատում,
- մարզի տնտեսական աճի տեմպերի բարձրացում,
- բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և

ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- կառավարման ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների ընդարձակում,
- միջհամայնքային միավորումների ձևավորում,
- հանրային կառավարման համակարգում հրապարակայնության,
- թափանցիկության և հաշվետվականության սկզբունքների արմատավորում, - քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,
- մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում:

**2. Ծրագրի ֆինանսավորումը**

Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի պլանավորված ֆինանսավորումը 2012-2015թ.թ. կազմել է 91.946.6 մլրդ. դրամ է, որի իրականացման երկու հիմնական աղբյուրներն են՝ պետական բյուջեն և մարզում ծրագրեր իրականացնող դոնորներ կազմակերպությունների միջոցները:

Ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեն է, որի հատկացումներն իրականացվում են բյուջետային հայտերի հիման վրա:

ՄԶԾ-ում մի շարք ծրագրերի համար արդեն ամրագրված են ֆինանսական միջոցների աղբյուրները, բայց միևնույն ժամանակ կան մի շարք միջոցառումներ, որոնց ֆինանսավորումը դեռ ամրագրված չէ:

**3. Ծրագրի մոնիտորինգի և գնահատման հայեցակարգը**

ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

***Քաղաքականության ուսումնասիրում***: Տարին երկու անգամ կուսումնասիրվի մոնիտորինգի հաշվետվության համար առաջընթացը՝ ՏԱՊ-ում ներառված միջոցառումների նկատմամբ:

***ՄԶԾ ցուցանիշներ և թիրախներ:*** Յուրաքանչյուր տարվա վերջում մոնիտորինգի տարեկան հաշվետվության համար ՄԶԾ-ի ցուցանիշների ցուցակը կթարմացվի: Այդ ցուցակը ներառում է ցուցանիշներ երկու աղբյուրներից. ՄԶԾ-ին հատուկ ցուցանիշներ՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքից, և ցուցանիշներ՝ ԱՀՌԾ մոնիտորինգի համակարգից:

***Մասնակցային մոնիտորինգ:*** Յուրաքանչյուր տարվա վերջում ՀԿ-ների կողմից կիրականացվի մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ կիրառելով Համայնքային գնահատման քարտերի մեթոդաբանությունը: Համայնքային գնահատումը կիրականացվի ՄԶԾ ոլորտների համար ներկայացուցչական ընտրանքի միջոցով: Այս մոնիտորինգի արդյունքները ամփոփ ձևով կներառվեն մոնիտորինգի տարեկան հաշվետվությունում:

***Ազդեցության գնահատում***: Յուրաքանչյուր տարվա վերջում մեկ ազդեցության գնահատում կիրականացվի, որի արդյունքները կամփոփվեն մոնիտորինգի տարեկան հաշվետվությունում: Այս գնահատումները կներառեն ՄԶԾ մեկ կամ երկու ոլորտ, ինչպես օրինակ՝ ենթակառուցվածքներ կամ գյուղատնտեսություն:

Մոնիտորինգի տարեկան հաշվետվության հիմնական նպատակը քաղաքականության ուսումնասիրությունն է: Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության հիմքը մոնիտորինգի համակարգի առանցքային բաղադրիչի՝ ՄԶԾ 2015թ. ՏԱՊ-ի, տրամաբանական հենքում ներկայացված քաղաքականության աղյուսակն է: Հաշվետվության մեջ փորձ է արվել գնահատել նշված ոլորտներում 2015թ.-ի տարեկան կտրվածքով իրականացված միջոցառումների ընթացքն ու արդյունավետությունը: Հաշվետվության մեջ քննարկվել են քաղաքականության ուղղությունները, ուրվագծվել ձեռքբերումներն ու գալիք ամիսների խնդիրները՝ կանխատեսելով հիմնական խոչընդոտներն ու դրանց հաղթահարման հնարավոր ուղիները: Կազմվել է մոնիտորինգի և գնահատման առավել համապարփակ հաշվետվություն՝ ներառելով վերոհիշյալ չորս բաղադրիչները:

**4. Հաշվետվության կառուցվածքը**

Հաշվետվությունը բաղկացած է յոթ հիմնական բաժիններից, որտեղ համապատասխանաբար ներկայացված են ՄԶԾ գերակա ոլորտներում տեղ գտած առաջընթացը և հիմնախնդիրները: Ոլորտային վերլուծություններն իրականացվել են հետևյալ չորս ենթակետերով.

**Քաղաքականության վերլուծություն:** Այս մասում ամփոփ ներկայացվում են 2015թ. տարվա համար տվյալ ոլորտում առաջարկվող միջոցառումները: Բնութագրվում են ՄԶԾ և ՏԱՊ-ի միջև առկա տարբերությունները, տարվա ընթացքում ՏԱՊ-ի տրամաբանական հենքում տեղ գտած փոփոխությունները (քաղաքականության, բյուջեի հատկացման և տարվա ընթացքում թիրախների փոփոխության):

**Իրականացման առաջընթացը:** Այս ենթաբաժնում ներկայացվում են ՏԱՊ-ի տրամաբանական հենքում սահմանված արդյունքային ցուցանիշների և միջոցառումների նկատմամբ 2015 թվականի տարվա ընթացքում արձանագրված հիմնական առաջընթացը: ՏԱՊ-ի բյուջեի հատկացումները համեմատվում են տարվա ընթացքում փաստացի ծախսերի հետ: Իրականացվում է թիրախների վերլուծություն:

**Խնդիրներ:** Ոլորտային բաժնի այս հատվածում ներկայացվում են տարվա ընթացքում քաղաքականությունների իրականացման հետ կապված դժվարությունները և հիմնախնդիրները: Միևնույն ժամանակ քննարկվում են նաև դրանց լուծման ուղիները:

**Քաղած դասեր և հետագա քայլեր**: Այս հատվածում ամփոփվում են 2015 թվականի ընթացքում առաջընթացի հիմնական եզրահանգումները և սահմանվում են այն խնդիրները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել բյուջեում և պլանավորման գործընթացում:

**Ա Կ Ն Ա Ր Կ**

Մշակվել էր նաև 2015 թվականի ,,Տարեկան աշխատանքային պլանը,, և 2015 թվականի միջոցառումների ծրագիրը, որոնք ըստ էության, իրենց շուրջ համախմբել են ՄԶԾ-ի 2015 թվականի ընթացքում իրականացվելիք բոլոր աշխատանքները և ի մի են բերվել ՄԶԾ-ն, տարեկան բյուջեն, ինչպես նաև մոնիտորինգի համակարգը՝ դրանք արտացոլելով մեկ փաստաթղթում, որը կարող է ծառայել որպես ՄԶԾ-ի 2015 թվականի ընթացքում իրականացման կառավարման գործիք:

## I. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ-Ի ԶԱՐԳԱՑՈՒՄ

### 1.1 Քաղաքականության վերլուծություն

**ՄԶԾ գերակայությունները ՓՄՁ ոլորտում և 2015 թվականի ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումները**:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2015 թ. ՄԶԾ-ով նախատեսվել է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը, 1)ՓՁՄ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում, 2)Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումների խրախուսման համար: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶԱԿ-ի և Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի հետ համապատասխան համագործակցությունը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

**Աղյուսակ 1**

***2015 թվականի ՄԶԾ-ով նախատեսված մասնավոր հատվածի և ՓՄՁ-ի զարգացման ոլորտի կարիքները և իրատեսական բյուջեն***

| h/h | Նախատեսված միջոցառումներ | 2015թ. ՄԶԾ-ով նախատեսված կարիքները /մլն. դրամ./ | 2015թ. Նախատեսված իրատեսական բյուջե /մլն. դրամ/ | 2015թ. փաստացի տարեկան բյուջե /մլն. դրամ/ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **1** | Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացում /պետ.բյուջե և դոնոր/ | 113.5 | 150.0 | 116.2 |
| **2.** | Մարզում զբոսաշրջության զարգացման աջակցություն, որից՝ Ֆրանսիայի Հանրապետության ,,ԱՖՐԱՏ,,ՄՀԿ | 5.0 | 3.0 | 12.0* |
| | **Ընդամենը** | **118.5** | **153.0** | **128.2**** |

**Ծանոթություն:*** ՀՀ Գեղարքունիքի մարզը ապակենտրոնացված համագործակցություն է իրականացնում Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտալ խորհրդի հետ: Համագործակցության շրջանակներում զբոսաշրջության բնագավառում ֆրանսիայի ,,ԱՖՐԱՏ,,միջազգային տուրիստական հասարակական կազմակերպության միջոցով մարզում 2015 թվականի ընթացքում իրականացվել են շուրջ 12մլն.դրամի ներդումներ: Սևանա թերակղզում տեղադրվել է շարժական տուրիստական գրասենյակ, տպագրվել են տուրիստական քարտեզներ, պատրաստվել են տեղական արտադրանքներից կազմված զբոսաշրջային զամբյուղներ:

**2015թ. ՄԶԾ-ով նախատեսված կարիքները տարեկան փաստացի ներդրումների նկատմամբ կազմել է 128.2 մլն.դրամ, որը կազմում է 108.2%, իսկ նախատեսված իրատեսական բյուջեի նկատմամբ՝ 83.8 %:

## 1. Տեղեկատվական աջակցության ծրագիր

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ ԶԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղը շարունակել է մանրամասնորեն ներկայացնել ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության ուղղությունները, մեր աջակցությունից օգտվելու կարգն ու անհրաժեշտ պայմանները: 2015թ. փոփոխվեց շրջանառության հարկի մասին օրենքը: Օրենքի մասին բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով Սևան, Ճամբարակ, Վարսենիս քաղաքներում, Դդմաշեն և Նորատուս գյուղերում կազմակերպվել են սեմինարներ, որի ընթացքում մանրամասն ներկայացվել է օրենքի առանձնահատկությունները, հաշվարկման և վճարման կարգը, և այլ հարցեր: Սեմինարներին մասնակցել են ավելի քան 100 հաշվապահներ և գործարարներ: Մասնաճյուղի գրասենյակում և մարզի համայնքներ կատարված այցելությունների ժամանակ 300 –ից ավելի անձի մանրամասն տեղեկատվություն է ներկայացվել օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ: Էլ. Փոստով և առձեռն տրամադրվել է հաշվետվության ձևը և հաշվարկաման կարգը:

Ընդհանուր առմամբ 529 ՓՄՁ սուբյեկտներին տարբեր ուղղություններով տրամադրվել է 777 աջակցություն:

Հոկտեմբեր ամսին ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի, ՓՄՁ ՈՒՎԿ-ի, Հայաստանի Զարգացման հիմնադրամի և Հայաստանի Արտահանման ապահովագրության գործակալության ներկայացուցիչները մասնաճյուղի գրասենյակում հանդիպել են մարզի գործարարների հետ և ներկայացրել տրամադրվող աջակցությունները և ծառայությունները:

## 2.Տեխնիկական աջակցության ծրագիր

Գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ ձեռք բերելու և իրացնելու մասին ՀՀ կառավարության՝ ՝ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1659-Ն որոշման համաձայն ՀՀ կառավարությունը Բելոռուսիայից գյուղատնտեսական տեխնիկա է ներմուծել և ինքնարժեքով տրամադրել գյուղացիներին, և կանխիկ և լիզինգով: Գեղարքունիքի մարզում տրամադրվել է 1 ՝Բելառուս՛ ՄՏԶ 82.1 տրակտոր, լիզինգով/ անհատ/, 1 Նիվա էֆեկտ կամբայն /Ծովինար համայնք/, 2 կից սարքավորում/ Ակունք և Ծովագյուղ համայնքներ:

Նոյեմբեր ամսին մեկնարկել է «Նոր սերնդի ՀԴՄ-ների ձեռքբերման արժեքի փոխհատուցմանե ծրագիրը, որի շրջանակներում դեկտեմբերի 17-ի դրությամբ աջակցություն է ստացել 143 մարզի գյուղական համայնքներում գործող մինչև 10 մլն. շրջանառություն ունեցող կազմակերպություններ: Աջակցության ընդհանուր գումարը կազմել է 4 500 000 դրամ: Աջակցության տրամադրումը շարունակվում է:

## 3.Խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի կողմից իրականացվել է Աջակցություն սկսնակ գործարարներին 2 ծրագիր՝ Սևան և Ճամբարակ քաղաքներում, որոնց համապատասխանաբար մասնակցել են Սևանի տարածքի 16,իսկ Ճամբարակից՝ 15 սկասնակ գործարար:Վարկավորվել են Սևանից՝ 11, իսկ Ճամբարակից՝ 10-ը:

## 4.Ֆինանսական աջակցության ծրագրեր

Վարկային երաշխավորությունների տրամադրման, վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման աջակցության ծրագրերից օգտվելու համար ՓՄՁ ԶԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղ հաշվետու ժամանակաշրջանում դիմել են ՓՄՁ սուբյեկտներ, որոնց տրամադրվել է մանրամասն տեղեկատվություն աջակցության տրամադրման նոր բարելավված պայմանների և ընթացակարգի վերաբերյալ:

Մասնաճյուղի աշխատակիցները պարբերաբար այցելել են նաև մարզի տարածքում գործող բանկերի մասնաճյուղեր, ներկայացրել ֆինանսական աջակցության տրամադրման պայմանների և ընթացակարգի փոփոխությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի աշխատակիցները պարբերաբար իրականացրել են մոնիտորինգ 2012-2015թթ. ՝Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՛ ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների մոտ ՝ գործունեության առկա վիճակի գնահատման, հիմնական միջոցների շարժի և վարկի մարման ընթացքը վերահսկելու նպատակով: Արդյունքները անփոփվել են համապատասխան տեղեկանքի մեջ և ներկայացվել են կենտրոնական գրասենյակ:

2015թ. ընթացքում Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել 22 գործարար, որոնց տրամադրվել է 45 512 000 դրամի երաշխիք: Այս ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին վարկը

տրամադրվում է 10% տարեկան տոկոսադրույքով, 5 տարի մարման ժամկետով, մինչև 5 մլն. դրամ, առանց գրանվի:

**5. Միջազգային համագործակցության ծրագրեր**

Մասնաճյուղի աշխատակիցները հեռախոսազանգերի և անհատական հանդիպումների միջոցով մարզի շահագրգիռ գործարարների շրջանում տեղեկատվություն են տարածել Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի գործունեության մասին, համագործակցության հնարավոր ուղղությունների մասին, նաև հիմնապաշարում առկա գործարար համագործակցության առաջարկների մասին:

**6.Հաշվապահական հաշվառման համաֆինանսավորման ծրագիր:**

2015թ. Մեկնարկել է ՓՄՁ սուբյեկտների հաշվապահական հաշվառման համաֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը ֆինանսավորում է Լոգիկոն ընկերության կողմից ՓՄՁ ներին մատուցվող հաշվապահական ծառայությունների արժեքի 80%-ը: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել 11 գործարար:

**7.Զբաղվածության տարածքային գործակալության հետ համագործակցություն**

Զբաղվածության տարածքային գործակալության հետ համագործակցության շրջանակներում գործարար ծրագիր է մշակվել 9 Սկսնակ գործարարի համար:

***Մասնավոր հատվածի և ՓՄՁ-ի զարգացման ոլորտի արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում***

| **Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր** | **Ցուցանիշներ** | **Թիրախ** | **Փաստացի 2015թ. տարեկան** |
|---|---|---|---|
| **1.Ռազմավարական նպատակ**<br><br>1.2 Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ և գործարար համայնքի | 1.1 ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով:<br>1.2 Քաղաքապետարաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի պատասխանատուներ են նշանակվել | | |

| | | | |
|---|---|---|---|
| ներկայացուցիչներին: | | | |
| **Ծրագիր 1.** | | | |
| 1.2.1ՓՁՄ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: | 1.2.1 Խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթները կազմակերպված և ֆինանսավորված են | 120 | 61 |
| 1.2.2 **Առաջնահերթ միջոցառումներ.** | 1.2.2 ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավված են ծրագրերի մշակման գործընթացում | 20 | 11 |
| 1.2.3 Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցում | 1.2.3 Ընդունված են մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային և 35 համայնքային ծրագրեր | 15<br>35 | 9<br>21 |
| 1.2.4 Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում | 1.2.4 Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում<br>Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները | 12 | 7 |
| **2.Ռազմավարական նպատակ** | | | |
| Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը: | 2.1.1Գերակա ոլորտների ձեռնարկությունների եկամուտների աճ: | 5% | 2.76% |
| | 2.1.2 Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ: | 18% | 8.7% |
| | 2.1.3 Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում: | 10% | 6.3% |
| | 2.1.4 Զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ: | 18% | 16.7% |
| **Ծրագիր 2.** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: **Առաջնահերթ միջոցառումներ.** | Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցված են | | |
| Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում | Հետազոտության արդյունքները ներկայացված և ընդունված են գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից | 5/Վարդենիս, Սևան, Գավառ, Մարտունի, Ճամբարակ/ | 5/Վարդենիս Գավառ, Մարտունի, Ճամբարակ, Սևան,/ |
| Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում | Գյուղմթերքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանը ընդունված է | 2 | 2 |
| Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում | Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանը ընդունված է | 5 | 3 |
| Գերակա ոլորտներում գործող ձեռնարկությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում | Աշխատուժի պահանջարկը ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատված է | 2 համայնք | 2համայնք |
| Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում | ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսական պլաններում նախատեսված են գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար | 3համայնք | 3համայնք |
| 1. **Ռազմավարական նպատակ**<br>3.1 Համագործակցել մեր հայրենակիցների և այլ արտաքին ներդրողներին ներգրավելու մարզում մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերի իրականացման | 3.1 Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ: | 3 համայնք | 2 համայնք |

| | | | |
|---|---|---|---|
| աշխատանքներում: | | | |
| **Ծրագիր 3.** Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: **Առաջնահերթ միջոցառումներ**. Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում<br><br>Ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում | 2 Տարածաշրջանային և կամ ոլորտային ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են<br><br>Տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են: | 4<br><br>10<br><br>4 համայնք | 3<br><br>8<br><br>3 համայնք |
| | | | |

**1.2 Խնդիրներ**

Անցած ժամանակահատվածի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրակացություններ անել այն մասին, թե ինչ ծավալներով են ընդգրկվել շահառուները (գործող ՓՄՁ-ներ և սկսնակ գործարարներ) ծրագրով նախատեսված միջոցառումները գործող ՓՄՁ-ների և սկսնակ գործարարների ընգրկվածության ծավալները ծրագրային միջոցառումներում:

Դեռևս սկսնակ գործարարների ներգրավվածությունը աջակցման ծրագրերում քանակական առումով չափազանց ցածր է: Այդ անհամաչափությունն ավելի է խորանում հատկացված ֆինանսական աջակցության գումարային առումով:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ծրագրի իրագործման հետագա փուլերում պետք է էականորեն ավելացնել սկսնակների աջակցման տեսակարար կշիռը և ֆինանսական և ոչ-ֆինանսական աջակցման գործիքները: Հնարավոր ֆինանսական ռեսուրսների վերաբաշխումը ի օգուտ սկսնակների կարող է զգալիորեն ավելացնել շահառու սկսնակների քանակը: Սա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման գործիքներն ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս աննշան է:

Քանի որ մարզպետարանը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ, ապա գործող ՓՄՁ-ների և սկսնակ գործարարների ֆինանսավորման ծրագրերն

իրականացվում են վարկավորող կազմակերպությունների կողմից, ինչն էլ որոշակի դժվարություններ է ստեղծում:

**1.3. Քաղած դասերը և հետագա քայլերը**

Այսպիսով, ՄԶԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը տարվա ընթացքում, չնայած վերը նշված թերացումների զգալի դրական արդյունքներ են արձանագրվել: Աջակցման գործիքները պետք է ավելի նպատակային օգտագործվեն, հատկապես սկսնակ գործարարների և գյուղական համայնքների ավելի լայն ընդգրկման նպատակով:

ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը կարևոր նախադրյալ կհանդիսանա մարզում մասնավոր հատվածի զարգացման ռազմավարության մշակման համար:

# II.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

## 2.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

### 2.1.1 Քաղաքականության վերլուծություն

**ՄԶԾ գերակայությունները կրթության ոլորտում և 2015 թվականի ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումները**:

ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի համաձայն կրթության բնագավառը դիտվում է որպես երկրի տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը, կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Կրթության որակի և մատչելիության բարձրացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում պետության և հասարակության առաջընթաց զարգացման, ինչպես նաև աղքատության և անհավասարության հաղթահարման կարևորագույն գործոններից է:

2015 թվականին ուշադրություն է դարձվել միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացմանը, նախադպրոցական կրթության համակարգի կատարելագործմանը, մատչելիության ապահովմանը:

Առկա խնդիրների իրականացման համար ուսումնասիրվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015 թվականների զարգացման կարիքները. 2015 թվականին այն կազմել է 6723900,0 հազար դրամ: 2015 թվականի ՏԱՊ-ով հաստատված իրատեսական բյուջեն կազմում է 6585106.2 հազար դրամ: 2015 թվականի տարեկան կատարողականը կազմել է 6583672.5 դրամ (շուրջ՝ 99.97%)

2015 թվականին ՄԶԾ-ով շարունակվել են դպրոցների վերանորոգման, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման և ատեստավորման, նախադպրոցական կրթության զարգացման, մարզում մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված ծրագրերը:

2015 թվականին մարզի կրթական և մշակութային հաստատություններում իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ (տես՝ Քաղաքաշինության ոլորտ):

Ներառական կրթության իրականացման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 70135.0 հազար դրամ, որի կատարողականը տարվա ընթացքում կազմում է 70135.0 դրամ:
ՀՀ պետական բյուջեի միջոցներով շարունակվում են ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները. 2015 թվականին ատեստավորվել են 851 ուսուցիչ :

2015 թվականին անցկացվել են մի շարք մշակութային միջոցառումներ, մասնավորապես՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին և Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին: Մարզի համայնքներում, հանրակրթական ուսումնական հաստատություններում, մշակութային օջախներում կազմակերպվել են ցուցահանդեսներ, հանդիպումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ՝ նվիրված ազգային և պետական տոներին, պետական և քաղաքական գործիչներին: <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ում կազմակերպվել են երկու տասնյակի հասնող ցուցադրություններ և տարաբնույթ միջոցառումներ: <<ՀՀ Գեղարքունիքի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում>> պատրաստվել է 3 նոր ներկայացում:
Իրականացված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից նախատեսված է 71090,1 հազար դրամ, որի տարեկան կատարողականը կազմել է 68646.9 դրամ:

***Աղյուսակ 3.***
***2015թվականի ՄԶԾ-ով նախատեսված կրթության, հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի կարիքները և փաստացի բյուջեն***

| **հ/հ** | **Նախատեսված միջոցառումներ** | ***2015թ. ՄԶԾ-ով նախատեսված կարիքները /հազար դրամ/*** | ***2015թ. Նախատեսված իրատեսական բյուջե /հազար դրամ/*** | ***2015թ.փաստացի (հազար դրամ)*** |
|---|---|---|---|---|
| ***1*** | ***Կրթություն որից՝*** | ***6723900.0*** | ***6585106.2*** | ***6583672.5*** |
| **1** | Հանրակրթական ուսուցում /ՀՀ պետբյուջե/ | ***6378321,6*** | ***6266058*** | ***6264624.3*** |
| **2** | Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցականներին տրանսպորտային ծառայությունների մատուցում /ՀՀ պետբյուջե/ | ***1208,4*** | ***1208,4*** | ***1208.4*** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Հատուկ կրթություն /ՀՀ պետբյուջե/ | *104459,0* | *95780.8* | *95780.8* |
| 4 | Արտադպրոցական դաստիարակություն /ՀՀ պետբյուջե/ | *15269,0* | *14634.4* | *14634.4* |
| 5 | Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում /ՀՀ պետբյուջե/ | *47340,0* | *45345.1* | *45345,1* |
| 6 | Ներառական կրթություն /ՀՀ պետբյուջե/ | *79402,0* | *70135.0* | *70135.0* |
| 7 | Նախադպրոցական կրթություն /ՀՀ պետբյուջե/ | *97900,0* | *91944.5* | *91944.5* |
| *2* | ***Հանգիստ, մշակույթ և կրոն /ՀՀ պետբյուջե/*** | *99900,0* | *71090,1* | *68646.9* |
| | Որից՝ | | | |
| | Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ | *26861,9* | *17601,4* | *17601,4* |
| | Մշակութային միջոցառումների իրականացում | 5200,*0* | *3278,2* | *835.0* |
| | Թատերական ներկայացումներ | *67838,1* | *50210,5* | *50210,5* |
| 3. | **Ընդամենը** | ***6823800,0*** | ***6656196.3**** | ***6652319.4*** |

Ծանոթություն: 2015թ-ի ՄԶԾ-ով նախատեսված կարիքների նկատմամբ 2015թ-տարեկան փաստացի կատարողականը կազմել է 97.48%, իսկ 2015թ-ի ՄԶԾ-ի նախատեսված իրատեսական բյուջեի նկատմամբ՝ 99.94 %:

*2015թ. նախատեսված իրատեսական բյուջեն եղել է 6727388,2 հազ. դրամ, սակայն սեպտեմբերին աշակերտների թվաքանակի փոփոխության հետ կապված կազմել է 6656196,3:

**Աղյուսակ 4.**

***Կրթության, հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտներում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում***

| *Միջոցառման* | *Արդյունքային ցուցանիշ* | *Թիրախ* | *Փաստացի* |
|---|---|---|---|

| *անվանումը* | | | *2015թ. փարեկան* |
|---|---|---|---|
| **Ոլորտային նպատակ՝** Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Գեղարքունիքի մարզում | 1. Համախառն ընդգրկվածությունը տարրական դպրոցում %,<br>2. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում %,<br>3. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը հանրակրթական դպրոցում՝<br>4. աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով՝<br>5. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը %<br>6. Նախադպրոցական կրթությունում 5-6 տարեկանների համախառն ընդգրկվածության գործակիցը%<br>7. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ %<br>8. Աշխատանքի տեղավորված նախնական(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ % | 99.5<br>99.5<br>8,3:1<br>25<br>66<br>45<br>33<br>70 | 99.5<br>99.5<br>8,6:1<br>19<br>63<br>44<br>32<br>68 |
| **1. Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:** | | | |
| 1.1 Դպրոցական շենքերի կառուցում և վերանորոգում | Վերանորոգված դպրոցների թիվը՝ | 2 | 2 |
| | Նոր կառուցված դպրոցների թիվը՝ | 1 | 0 |
| 1.2 Դպրոցների մարզադահիլիճների և խաղահրապարակնե րի վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում | Բարեկարգված մարզադահիլճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը % | 5 | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| 1.3 Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում | Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռ %<br><br>Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը 20000 հազ., % | 60<br><br><br>20000,<br>$70^0/_0$ | 60<br>54%<br><br>20000<br>$70^0/_0$ |
| 1.4 Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում | Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը՝<br><br>Աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով՝<br><br>Ինտերնետային կապով ապահովված հանրակրթական դպրոցների թիվը դպրոցների ընդհանուր թվի նկատմամբ % | 115<br><br>26<br><br>117:117<br>$100^0/_0$ | 115<br><br>19<br><br>117:117<br>$100^0/_0$ |
| **2. Ուսուցչական անձնակազմի որակավարման բարձրացում** | | | |
| 2.1 Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում | Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը՝ | 650 | 852 |
| 2.2 Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նպատակով | Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ՝ | *2900* | 3171 |
| 2.3 Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում | Հանրակրթական դպրոցների ատեստավորված ուսուցիչների թիվը (%) | 2900<br>$100^0/_0$ | 3171<br>$100^0/_0$ |

| | | | |
|---|---|---|---|
| | Տարակարգ ստացած ուսուցիչների տեսակարար կշիռը ատեստավորված ուսուցիչների ընդհանուր թվաքանակի մեջ % | 10 | 0,0028 |
| **3. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում** | | | |
| 3.1 Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում: | Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը՝<br><br>Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում % | 20<br><br>1 | 12<br><br>0,0016 |
| 3.2 Դպրոցական խորհուրդների անդամների վերապատրաստում՝ խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով | Վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցական խորհրդի անդամների թիվը՝<br><br>Դպրոցում իրականացվող ոչ պետական ծրագրերի /նախաձեռնությունների թիվը | 60<br><br>25 | -<br><br>20 |
| 3.3 Աշակերտական խորհուրդների ակտիվության բարձրացում՝ խորհրդի անդամների և դաստիարակության գծով տնօրենի տեղակալի, մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի վերապատրաստման միջոցով | Դպրոցական խորհուրդներում աշակերտական խորհրդի ներկայացուցիչների թիվը | 115 | 115 |
| | Աշակերտական խորհուրդների կողմից իրականացված նախաձեռնությունների թիվը | 5 | 5 |
| **4. Ներառական կրթության համակարգի զարգացում** | | | |
| Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների | Հանրակրթական դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների | | |

| | | | |
|---|---|---|---|
| համար կրթության նպաստավոր պայմանների ստեղծում | /աշակերտների թիվը՝ | 100 | 107 |
| | Հանրակրթական դպրոցներում կառուցված թեքահարթակների թիվը՝ | 9 | 4 |
| **5. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:** | | | |
| 5.1 Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում | Վերանորոգված և նոր գործող մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների թիվը՝ | 8 | 2 |
| 5.2 Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում | Մարզային/ համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը՝ | 8 | 3 |
| | Հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռը % | 0,7 | 0,4 |
| | Ցուցահանդեսների այցելուների քանակ տարեկան կտրվածքով՝ | 4200 | 2198 |
| | Թատերական ներկայացումների քանակ՝ | 3 | 3 |
| | Թատերական միջոցառումների մասնակիցների քանակ՝ | 4500 | 2400 |
| **6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում** | | | |
| 6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում | Վերանորոգված մանկապարտեզների թիվը՝ | 4 | 2 |
| 6.2 Նախադպրոցական հասատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի | Թարմացված ուսումնական և նյութատեխնիհակական բազա ունեցող մանկապարտեզների թիվ՝ | 13 | 13 |

| | | | |
|---|---|---|---|
| բարելավում | | | |
| 6.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում | Վերապատրաստված դաստիարակների թիվ՝ | 45 | 40 |
| 6.4. Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում | Նախադպրոցական այլընտրանքային ծառայություններում ընդգրկված երեխաների թիվը՝ | 30 | 30 |
| | գործող նախադպրոցական հաստատությունների թիվը՝<br><br>Նոր ներդրված ՆԴՀ –ների թիվը՝ | 45<br><br>2 | 45<br><br>1 |
| | Նախադպրոցական կրթությունում 5-6 տարեկանների համախառն ընդգրկվածության գործակիցը % | 27 | 26 |
| | Նախադպրոցական կրթությունում 5տարեկանների զուտ ընդգրկվածության գործակիցը (%) | 35 | 33 |

***2.1.2 Խնդիրներ***

Ընդհանուր առմամբ 2015թվականի ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված, սակայն չիրականացված միջոցառումները նախատեսվում է կատարել 2016 թվականին:

***2.1.3 Քաղած դասերը և հեփագա քայլերը***

2015 թվականին ՏԱՊ–ով իրականացված միջոցառումները թեև քիչ են, սակայն նշանակալի՝ կրթության ոլորտում առկա խնդիրների հաղթահարման գործընթացում: Նպատակահարմար է աշխատանքները կազմակերպել հաստատված աշխատանքային ծրագրերին համաձայն, չխախտել ժամանակացույցը, մասնավորապես՝ դպրոցական շենքերի հիմնանորոգման գործում:

Ոլորտի զարգացման հետագա գործընթացը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է շահագրգիռ բոլոր օղակների՝ պետական, միջազգային, հասարակական կազմակերպությունների ակտիվ համագործակցությունը:

## 2.2ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

### 2.2.1 Քաղաքականության վերլուծություն

**Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:**

2015 թվականի ընթացքում առողջապահության ոլորտում մարզի զարգացման դեռևս առաջնահերթ նպատակն է հեռավոր գյուղական համայնքներում առողջության պահպանման առաջնային ծառայությունների բարելավում և մատչելիության բարձրացում, նեղ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի վերապատրաստում, պոլիկլինիկական կազմի բժիշկների միջոցով հեռավոր գյուղերում բաց դռների օրերի կազմակերպում, հղի կանանց համար նախածննդյան խնամքի դասընթացների կազմակերպում, իմունոկանխարգելման գործի պրոպագանդում, ԶԼՄՆ-երի միջոցով տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ ախտորոշման և լիարժեք բուժման ազգային ռազմավարության մասին հանրային իրազեկության բարձրացում, բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում, ծխելու դեմ պայքարի միջոցառումների կազմակերպում:

2015թ. նոյեմբերին ավարտվել է Ճամբարակի ԱԿ հիմնանորոգման աշխատանքները:

,,Բժշկական օգնություն և զարգացում'' միջազգային հասարակական կազմակերպության կողմից վերանորոգվել են Ճամբարակի տարածաշրջանի Դպրաբակի և Վահանի բուժհիմնարկները:

2015թ-ի հունվարից ,, Համաշխարհային բանկի,, կողմից մեկնարկվել և շարունակվում է շաքարային դիաբետի, զարկերակային ճնշման և արգանդի վզիկի քաղծկեղի վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագիրը:

2015թ. ընթացքում մանկական պրոֆիլի բժիշկների և բուժքույրերի համար կազմակերպվելու են վերապատրաստումներ՝ կապված մանկական հիվանդությունների բուժման հետ:

2015թ. ընթացքում իրականացվել է ուսուցողական, լուսավորչական ծրագրեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով, հետազոտություններ միգրանտների շրջանում:

2015 թվականին մեկնարկվել և շարունակվում է սոց. շահառուների պրոֆիլակտիկ պարտադիր հետազոտման ծրագիրը:

2015թ. ընթացքում իրականացվել է անհետաձգելի վիրահատության ծրագիրը, որը նախատեսում է 1 ոչ դեղապատ ստենդի անվճար տեղադրում:

2015թ. ընթացքում իրականացվել և 2016թ. շարունակվելու է ուսուցողական, լուսավորչական ծրագրեր ծխախոտի դեմ պայքարի շրջանակներում:

,,Բժշկական օգնություն և զարգացում'' միջազգային հասարակական կազմակերպության կողմից վերապատրոստումներ են անցկացվել Գեղամասարի, Մեծ Մասրիկի, Լուսակունքի և Ծովակի ԱԱՊԿ – ների բժշկական անձնակազմին հետ, վերապատրաստման բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր:

**Աղյուսակ 3**

***Մարզի զարգացման ծրագրով 2015թ. Առողջապահության ոլորտում ՏԱՊ-ով նախատեսված կարիքները և իրատեսական բյուջեն***

| Հ/հ | Նախատեսված միջոցառումներ | 2015թ. ՄԶԾ-ով նախատեսված կարիքները | 2015թ. նախատեսված իրատեսական բյուջե | 2015թ. փաստացի բյուջեն |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | /մլն.. դր./ | /մլն,. դրամ | |
| 1. | Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում, այդ թվում | **950600.0** | **755600.0** | **-** |
| | Ճամբարակի ԱԿ հիմնանորոգում **ՀՍՆՀ/պետ բյուջե և միջազգային կազմ.** | **205.6** | **205.6** | **66.8**<br>**204.7** |
| | Դպրաբակի ԲԱ | **0** | **0** | **3.1** |
| | Վահանի ԲՄԿ | **0** | **0** | **1.2** |
| | Սևանի հիվանդանոց ՓԲԸ հիմնանորոգում **,,Համաշխարհային բանկ,,** | **745000** | **550000** | **0** |
| 2. | Պայքար Հայաստանում երեխայի սեռի կանխատեսված ընտրության հետ. ,,Մարտունու կանանց համայնքային խորհուրդ'' ՀԿ | **10800** | **10800** | **0.0** |
| 3. | 2015թ.ՄԶԾ- ով նախատեսված կարիքները /1+2=3/ | **2538600** | **0** | **0** |
| 4. | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3500.0** | **766.4** | **271.5** |

**Ծանոթություն՝**

*- ՄԶԾ-ի 2015թ. կարիքների նկատմամբ ՏԱՊ –ով իրականցված փաստացի կատարողականը կազմել է 7.8 %:

*- ՏԱՊ –ով նախատեսված իրատեսական բյուջեի նկատմամբ 2015 թ. փաստացի բյուջեն կազմել է 35.4 %:

** - ՄԶԾ-ով նախատեսված առողջապահական օբյեկտների հիմնանորոգուման աշխատանքները չի իրականացվել Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորում չտրամադրելու պատճառով:

**Իրականացված միջոցառումները՝**

1. Ավարտվել են <<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ-Ի հիմնանորոգման աշխատանքներն:

2015թ.-ին նախատեսված տարեկան փաստացի բյուջեյով հիմնանորոգման այլ աշխատանքներ չեն իրականացվել:

Աղյուսակ 6.

***Առողջապահության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում***

| հ/հ | Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | տարեկան |
|---|---|---|---|---|
| 1. | **Ոլորտային նպատակ՝**<br>Բարելավել<br>բուժսպասարկման մատչելիությունը և որակը Գեղարքունիքի մարզում | 1. Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000՝ 0-1 կենդանածինների հաշվով - | 0-1 | 0 |
| | | 2. Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000՝ 0-1կենդանածինների հաշվով | 0-1 | 0 |
| | | 3. Մայրական մահացություն 100000 կենդանածինների հաշվով0-1 | 0-1 | 0 |
| | | 4. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, 29 հազ. մարդ | 20000 | 473156 |
| | | 5. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ բնակչի հաշվով- տարեկան 68% | 60% | 70% |
| | | 6. Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդները, 86% | 80% | 80% |
| | | 7. Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, դեպքերի թիվը 10000 բնակչի հաշվով – 300-320 | 300-350 | 210 |
| | | 8. ՄԻԱՎ տարածվածության աստիճանը, վարակակիրների թիվը՝ 10000 բնակչի հաշվով - 4 | 10 | 2 |
| | | 9. Բնակչության հիվանդացությունը ակտիվ տուբերկուլյոզով՝ դեպքերի թիվը 10000բնակչի հաշվով՝ 5 | 5 | 2 |
| **1 Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացությունների և մահացության նվազմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը:** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Արդյունք 3.**<br>Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների մայրական կազմի ստեղծում և պոպուլյացիայի համալրում<br>***Միջոցառումներ***<br>• Սևանա լճում սիգի պոպուլյացիայի և Սևանի ավազանում էնդեմիկ ձկնատեսակների մայրական կազմի ստեղծման, բուծման և պահպանության համար ձկնաբուծարանների կառուցում/վերակառու-ցում, հանրային մասնավոր համագործակցության մոդելի կիրառմամբ: ՄԶԾ-ի կողմից տրամադրվող միջոցները պետք է վերադարձվեն ապրանքային ձևով՝ լիճ բացթողնվող մանրաձկան տեսքով,<br>--Սևանա լճում սիգի պոպուլյացիայի | *Ձկնաբուծարաններում ստեղծված է Սևանի իշխանի մայրական կազմ:<br><br>*Սևանա լիճ բաց թողնված մանրաձկերի քանակը և գումարը<br><br>այս տարի Սևանա լիճ է բաց թողնվելու /366700 / հատ սևանի իշխանի մանրաձուկ 60մլն դրամ արժողությամբ<br><br>ՀՀ կառավարության | 366700 հատ 60.մլն.դրամ | 610000 հատ<br><br>Կարճաղբյուր համայնքում կառուցվել է նոր ձկնաբուծարան<br><br>Նախագիծը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերականգնման խթանում:<br><br>--Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկնատեսակների գույքագրում, հաշվառում օգտագործման թյուլատրելի չափաքանակների սահմանում և պահպանության միջացառումների իրականացում:<br><br>Լիճ բաց թողնվող մանրաձկան պայմանագրերի իրականացման նկատմամբ սահմանել հանրային հսկողություն | որոշմամբ երեք տարով դադարեցվի Սևանա լճում արդյունագործական ձկնորսությունը<br><br>Ամեն տարի պետ բյուջեից հատկացվելու է՝ 7.526մլն. դրամ<br><<Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում:>>ՄԺԾ շրջանակներում իրականացվող ծրագրի համար | 7,526մլն. դրամ | քննարկման փուլում է<br><br>7.510մլն.դրամ<br><br>0 |
| | **Արդյունք 4**.<br>Սևանա լիճը սնող գետերի վերահսկողության կազմակերպում | Սևան քաղաքում բարելավվել է կեղտաջրերի հեռացման ցանցը:<br>Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան և վերանորոգվել է ցանցը:<br><br>Մշակել և աստիճանաբար իրականացնել Սևանի ավազանի մյուս խոշոր | Շինարարական աշխատանքները ավարտված են,<br><br>Մաքրման կայանները գործում են | Շինարարական աշխատանքներ ը ավարտված են,<br><br>Մաքրման կայանները գործում են |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղացման և կեղտաջրերի մաքրման համալիր ծրագիրը, առաջնահերթությունը տալով Գավառագետի ափերին գտնվող խոշոր համայնքներին /Նորատուս, Կարմիրգյուղ, Սարուխան և այլն/: | Համայնքներում կոյուղագծերի կառուցում | Կատարվում են նախապատրաստական աշխատանքներ |
| | | Ափամերձ տարածքներում շահագործվող կառույցները կահավորված են սեպտիկ հորերով, կանխված են կեղտաջրերի արտանետումները դեպի Սևանա լիճ թափվող գետերը | | 85տոկոս |
| | | Ընդհանուր շահագործվող օբյեկտների 85% | 85տոկոս | |
| | ***Միջոցառումներ*** -Համաձայնեցնել գետերի վրա իրականացվող աշխատանքները և դրանց ժամանակցույցը ՀՀ բնապահպանության նախարարության և մարզի բնապահպանական մարմինների հետ -Ստեղծել մոնիտորինգի խմբեր, մասնագետների և ՀԿ-ների ներգրավմամբ, | *Սևանա լճի մեխանիկական աղտոտվածությունը բարելավված է* Գետերի հուների մաքրման աշխատանքների կատարման ժամանակացույցը համաձայնեցված է ՀՀ բնապահպանության նախարարության և մարզպետարանի բնապահպանության վարչության հետ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ծվադրման գետերի օգտագործման վերահսկողության համար: Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների աշխատանքներում ՏԻՄ-երի և հանրային մասնակցության ապահովում: | Համաձայնեցված նախագծեր, 100%<br><br>*Գետերից ջրառը համապատասխանում է նվազագույն թողքի համար սահմանված արժեքին* | 100% | 100% |
| | **Արդյունք 5.**<br>Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում<br>***Միջոցառումներ***<br>• Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում<br>• Միջհամայնքային աղբավայրերի նախագծում<br>• Տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցություն աղբահանության պայմանագրային հարաբերությունների ձևավորման համար<br>Գագարին համայնքր տարածքում աղբավերամշակման գործարանի կառուցում | *Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ,* 5 հատ<br><br>Մարզի 5 քաղաքներում մշակված է աղբավայրերի կառավարման պլան, ցանկապատված են գործող աղբավայրերը<br><br>*Աղբավայրեր որոնք ցանկապատվել են, թիվ*<br>*Միջհամյանքային աղբավայրերի մշակված նախագծեր, թիվ*<br>Կազմակերպված է աղբահեռացման միջհամայնքային կազմակերպություն<br>*Համայնքներ, որոնք ունեն աղբահեռացման պայմանագրեր, թիվ* | | Աշխատանքներ են տարվում մարզի համայնքների աղբահեռացումը կազմակերպել Կոտայքի կոշտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագծի հայեցակարգը մշակվել է և հավանության արժանացել ՀՀ կառավարության2011թ հունիսի 10-ի թիվ 22 նիստով: | | կենցաղային թափոնների համար կառուցվող աղբավայրում |
| | **Արդյունք 6.**<br>Խախտված հողերի վերականգնում<br>***Միջոցառումներ***<br>• Լքված հանքավայրերի ռեկուլտիվացիա<br>• Գործող հանքարդյունահանող ընկերությունների բնապահպանական կառավարման պլանների իրկանացման հսկողության ուժեղացում<br>• Տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացում<br>Թափոնների քանակի նվազեցմանն ուղղված աշխատանքներ՝ անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման, թափոնների հավաքման ու օգտահանման, թափոնների կրճատման, առավելագույն օգտագործման ապահովման,ներառյալ թափոնների երկրորդային օգտագործման հնարավորությունների ընդլայնման միջոցով: | Մելորացված հողեր, հա | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

**4. 3 Խնդիրներ**

Ազգային պարկի տարածքում դեռևս շարունակվում է ապօրինի արածեցումները, անտառամերձ տարածքների համայնքների խոշոր եղջերավոր անասունների հիմնական մասը մինչև խոր աշուն արածեցվում է այդ տարածքներում, մասնավորապես այն հատվածներում որտեղ ընթանում է անտառի բնական վերաճ:

Սևանա լճից անարգել կերպով որսվում է ոչ սեռահասուն ձկները, արգելելով նրանց բնական աճը և նպաստելով ձկնատեսակների ոչնչացմանը:

Մարզպետարանը պատրաստ է աջակցելու մարզի տարածքում միջազգային և այլ կազմակերպությունների կողմից կատարվող բնապահպանական ծրագրերի իրականացմանը:

Վարչությունը չունի անհրաժեշտ տեխնիկա մարզի տարածքում համապատասխան վերահսկողություն և ուսումնասիրություն կատարելու համար:

**4.4 Քաղած դասերը**

Մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առաջանցիկ տեմպերով՝ մինչև ջրի բարձրացումը:

Մրցույթները պետք է անցկացվեն ժամանակին:

Խիստ կարևորվում է մրցույթում հաղթած կազմակերպության տեխնիկական զինվածության համապատասխանելիությունը արդի պահանջներին:

Ֆինանսավորումը պետք է տրվի ժամանակին և տվյալ աշխատանքին անհրաժեշտ գումարով:

# V.ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

## 5.1ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

**ՄԶԾ գերակայությունները ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում և 2015թ.-ի ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումներ**

**5.1.1. Քաղաքականության վերլուծություն**

Այս ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին,որը ուղակիորեն կնպաստի աղքատության նվազմանը մարզում:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես նպաստել է մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ

անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Վերը նշված թերությունները շտկելու համար 2015թ.-ի ՏԱՊ-ի իրատեսական բյուջեով նախատեսվել էր 2482.0մլն դրամի աշխատանքներ: 2015թ-ի տարեկան փաստացի իրականացվել է 2498.8մլն դրամի աշխատանքներ կամ տարեկան նախատեսվածի 100.6%-ը: Որից՝ 2015թ-ին ՀՀ կառավարության 2015թ-ի հուլիսի 2-ի N766-Ն որոշումով իրականացվել է ՏԱՊ-ով չնախատեսված աշխատանքներ՝ 47մլն դրամի չափով:

2015թ. ՄԶԾ-ով նախատեսվել է մարզում վերանորոգել և կառուցել խմելու ջրի և ջրահեռացման շուրջ 205կմ երկարությամբ խողովակաշար,որի ֆինանսավորման կարիքը կազմում է 1854.0մլն դրամ:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական և Ասիական Զարգացման բանկերի տրամադրած միջոցներով ''ՀՋԿ'' ՓԲ ընկերությունը 2015թ-ին մարզում Սևան, Գավառ, Մարտունի, Ճամբարակ քաղաքներում և Նորատուս, Սարուխան, Կարմիրգյուղ, Գանձակ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Դդմաշեն գյուղերում կատարել է ջրամատակարարման համակարգի բարելավման 2451.8մլն դրամի աշխատանքներ:

ՀՀ Կառավարության 2015թ-ի հուլիսի 2-ի N766-Ն որոշումով մարզի Մաքենիս և Փ. Մասրիկ համայնքներում 2015թ-ին իրականացվել են խմելու ջրագծերի համապատասխանաբար 18մլն դրամի և 29մլն դրամի կառուցման աշխատանքներ, որը կազմում է 47մլն դրամ:

### 5.1.2 Իրականացման առաջընթաց

2015թ-ին տարեկան իրականացված աշխատանքները կազմում են ընդհանուր աշխատանքների 100.6%-ը:

**Աղյուսակ 13.**

**ՄԶԾ-ով 2015թվականի մարզի համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի կարիքները և տարեկան կատարված աշխատանքները.**

<table>
<tr><th>Հ/Հ</th><th>Միջոցառման անվանումը</th><th>ՄԶԾ-ով նախատեսված 2015թ. կարիքները /մլն. դրամ/</th><th>2015թ. իրատեսական պլանավորված բյուջե /մլն. դրամ/</th><th>Փաստացի կատարված 2015թ-ի տարեկան աշխատանքներ</th></tr>
<tr><td>1</td><td>Խմելու ջրագծերի նորոգում և կառուցում<br>Այդ թվում՝<br>Պետբյուջե<br>Համայնքային բյուջե<br>Մասնավոր ներդրող՝ /<<ՀՋԿ> ՓԲԸ/<br>Այլ/բարեգործական կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ/</td><td>1854.0</td><td>2482.0<br><br>2482.0</td><td>2498.8<br><br>2498.8</td></tr>
<tr><td></td><td>Գավառ քաղաքում ջրամատակարարման համակարգի բարելավում</td><td rowspan="2">170.0</td><td rowspan="2">285.0</td><td rowspan="2">400.0</td></tr>
<tr><td></td><td>Սարուխան համայնքում ջրամատակարարման համակարգի բարելավում</td></tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Մարտունի քաղաքում ջրամատակարարման համակարգի բարելավում | 110.0 | 162.0 | 208.6 |
| | Գավառ քաղաքում ջրամատակարարման համակարգի բարելավում | 280.0 | 473.0 | 459.0 |
| | Կարմիրգյուղ համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | | | |
| | Նորատուս համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | 70.0 | 75.0 | 35.1 |
| | Սարուխան համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | | | |
| | Գանձակ համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | 170.0 | 210,0 | 152.5 |
| | Դդմաշեն համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | | | |
| | Լճաշեն համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | 400.0 | 550.0 | 511.4 |
| | Չկալովկա համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | | | |
| | Նորաշեն համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում | | | |
| | ք. Սևան, Ձկնգետ-Սևան ջրատար | 12.0 | 12.0 | 12.0 |
| | ք. Սևան ջրամատակարարման համակարգի բարելավում | 382.0 | 434.0 | 434.0 |
| | Ճամբարակ քաղաքում ջրամատակարարման համակարգի բարելավում | 260.0 | 281.0 | 239.2 |
| 2 | Ջրահեռացման գծերի կառուցում և նորոգում<br>**Այդ թվում՝**<br>Պետբյուջե<br>Համայնքային բյուջե<br>Մասնավոր ներդրող<br>Այլ | 465.5 | 0 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Մաքենիս համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | 0.0 | 0.0 | 18.0 * |
| | Փ. Մասրիկ համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | 0.0 | 0.0 | 29.0 * |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **2319.5 /1854.0+465.5/** | **2482.0** | **2498.8 /2451,8+47/** |

Ծանոթություն. * 2015թ.ՄԶԾ-ով նախատեսված կարիքների նկատմամբ տարեկան կազմել է 107.7%-ը, իսկ իրատեսական պլանավորված բյուջեի կատարողականը կազմում է 100.7%:

ՀՀ Կառավարության 2015թ-ի հուլիսի 2-ի N766-Ն որոշումով մարզի Մաքենիս և Փ. Մասրիկ համայնքներում 2015թ-ին իրականացվել են խմելու ջրագծերի համապատասխանաբար 18մլն դրամի և 29մլն դրամի կառուցման աշխատանքներ, որը կազմում է 47մլն դրամ:

**Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում**

**Աղյուսակ 14.**

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | 2015թ-ի տարեկան |
|---|---|---|---|---|
| | **Ոլորտի նպատակը** Գեղարքունիքի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում | | | |
| 1 | **Արդյունք 1.** | 1.1 Նորոգված ու կառուցված խմելու ջրագծերի երկարու թյունը կմ<br>Թիրախ՝ /2015թ. նորոգված գծեր 130կմ, կառուցված գծեր 75կմ/<br>1.2 Նորոգված ու կառուցված ջրահեռացման գծերի երկարությունը՝ կմ<br>Թիրախ՝ /2015թ. նորոգված՝ 17կմ, կառուցված՝ 18կմ/ | 130կմ<br>75կմ<br>17կմ<br>18կմ | 0.0կմ<br>Կառուցված՝245կմ,<br>0.0<br>0.0 |
| 2 | Միջոցառումներ<br>1.1 Խմելու ջրագծերի նորոգում/կառուցում մարզում<br>1.2 Ջրահեռացման համակարգերի նորոգում/կառուցում | Ներդրում՝<br>Ֆինանսավորման կարիքը՝ 1854,0մլն դրամ<br>Ֆինանսավորման կարիքը՝ 465.5մլն դրամ | 1854.0 /դրամ/<br>465.5 /դրամ/ | 2498.8մլն դրամ<br>0.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մարզում | | | |

**5.1.3.Խնդիրներ**

Մարզի համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնական մասը ունեն 30-50 տարվա հնություն, խարխլված են և ենթակա են հիմնանորոգման:Պետբյուջեի և այլ ներդրողների սուղ միջոցները բավարար չեն հիմնախնդիրը որոշ չափով կարգավորելու համար:

Ինքնուրույն ջրամատակարարում իրականացնող համայնքները միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ ծրագրերով իրականացնում են աշխատանքներ, որոնց մասին մարզպետարանը հաճախ տեղեկացված չի լինում:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի կառուցման և նորոգման տարեկան բյուջետային հայտերը չեն համաձայնեցվում մարզպետարանի աշխատակազմի բնակարանային և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող բաժնի կողմից մշակված երկարամյա ծրագրով նախատեսված առաջնահերթությունների հետ:

**5.1.4.Քաղած դասերը և հետագա քայլերը**

Հաջորդ տարվա բյուջետային հայտերը կազմելիս պետք է նախորոք հաշվի առնվեն երկարամյա ծրագրով նախատեսված առաջնահերթությունները:

Ինքնուրույն ջրամատակարարում իրականացնող համայնքները դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասին պետք է տեղեկացնեն մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը,որն իր հերթին կկանխի շինարարության սկզբում և վերջում առաջացած անօրինականությունները և բարդույթները:

## 5.2 ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

**ՄԶԾ գերակայությունները գազամատակարարման ոլորտում և 2015թ.-ի ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումներ:**

**5.2.1. Քաղաքականության վերլուծություն**

2015 թվականին գազամատակարարման համակարգի բնակիչ բաժանորդների թիվը աճել է 0.22 %-ով: Այսօր բնական գազ է մատակարարվում մարզի միայն 60 համայնքներին:: 2015թ-ին ‘Գազպրոմ-Արմենիա’ ՓԲԸ –ի կողմից նախատեսված է իրականացնել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Գազիֆիկացված տնային տնտեսությունների թիվը հասել է 45600-ի:
Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ‘Գազպրոմ-Արմենիա’ ՓԲԸ –ի կողմից առաջիկա տարիներին ներդրումային ծրագրերով մարզում գազիֆիկացման աշխատանքներ չեն նախատեսվել:

**5.2.2. Իրականացման առաջընթացը.**

2015թ-ին ՙԳազպրոմ-Արմենիա՚ ՓԲԸ –ի կողմից <<Գավառ>>, <<Մարտունի>> և <<Սևան>> ԳԳՄ-երի սպասարկման տարածքներում իրականացվել են գազատարների հիմնանորոգման և վերատեղադրման ընթացիկ աշխատանքներ:

**Աղյուսակ 15.**
**ՄԶԾ-ով 2015 թվականի գազամատակարարման ոլորտի կարիքները և տարեկան կատարված աշխատանքները:**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | ՄԶԾ-ով նախատեսված 2015թ. կարիքները /մլն. դրամ/ | 2015թ. իրատեսական պլանավորված բյուջե /մլն. դրամ/ | 2015թ. տարեկան /Փաստացի բյուջե/ մլն. դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Գազամատակարարման գծերի վերատեղադրում և ընթացիկ նորոգում<br>Այդ թվում՝<br>Պետբյուջե<br>Այլ՝ ( IFAD ) | 318.0 | 0.0 | 80.0 |
| | ՙԳազպրոմ-Արմենիա՚ ՓԲԸ՝ որից՝ | 318.0 | 0.0 | 80.0 |
| | **Ընդամենը** | **318.0** | **0.0** | **80.0** |

Ծանոթություն. Գազամատակարարման ոլորտում 2015թ, պետբյուջեի <<Գազպրոմ-Արմենիա>> ընկերության կողմից գազիֆիկացման աշխատանքներ նախատեսված չեն եղել, սակայն IFAD ծրագրով Արտանիշ համայնքում կառուցվել է 6կմ երկարությամբ միջին ճնշման գազատար՝80մլն դրամ արժողությամբ: 2015թ.ՄԶԾ-ով նախատեսված կարիքների նկատմամբ տարեկան կազմել է 25%:

**Աղյուսակ 16.**
**Գազամատակարարման ոլորտի արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում**

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | 2015թ. տարեկան /փաստացի/ |
|---|---|---|---|---|
| | **Ոլորտի նպատակը**<br>Գեղարքունիքի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում | | | |
| 1 | Արդյունք 1.<br>Գազ ունեցող տնային տնտեսությունների թիվը աճել է | Գազ ունեցող համայնքների թիվը 61<br>1.1 Գազամատակարարման գծերի երկարություն, 1.2% նախորդ տարվա նկատմամբ<br>Թիրախ՝ 31կմ գծերի կառուցում | 61<br>1.2%<br>31կմ | 60<br>0.6%<br>6կմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 2 | Միջոցառումներ 1.1Գազամատակարարման գծերի տեղադրում համայնքներում | Ֆինանսավորման կարիքը՝ 318.0 մլն դրամ | 318.0 մլն դրամ | 80.0 |

**5.2.3.Խնդիրներ**

Մարզի բնակավայրերի գազիֆիկացման հիմնական խնդիրներից են հանդիսանում գազի բարձր գինը և ազգաբնակչության բացակայությունը:Գազիֆիկացման ընդլայնմանը խոչընդոտ է հանդիսանում նաև բնակավայրերի աշխարհագրական դիրքը: Սահմանամերձ շատ բնակավայրեր գտնվում են մայրուղային գազատարերից զգալի հեռավորության վրա և ունեն պոտենցիալ բաժանորդների փոքր քանակություն: Այս պարագայում համայնքների գազիֆիկացումը դառնում է շատ ծախսատար և անարդյունավետ:

**5.2.4. Քաղած դասերը և հետագա քայլերը**

Հաջորդ տարվա բյուջետային հայտերը կազմելիս պետք է նախօրոք հաշվի առնվեն երկարամյա ծրագրով նախատեսված առաջնահերթությունները: Առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել սահմանամերձ համայնքներին ռազմավարական վառելիքով՝ գազով, ապահովելուն և բնակչության արտահոսքը նվազեցնելուն:

## 5.3 ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

**<u>5.3.1 Քաղաքականության վերլուծություն</u>**

- ՀՀ 2015թ. պետական բյուջեի միջոցներով մարզում նախատեսված էր իրականացնել Հ-39 Մ10 – Գավառ – Մ10 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+00-կմ4+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Պահպանման և շահագործման աշխատանքների շրջանակներում 2015թ. նախատեսված էր իրականացնել 431.1կմ միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման, ինչպես նաև նույն նշանակության 538.6 կմ ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքներ:

Վերոհիշյալ ծրագրերի իրականացման նպատակներով ՀՀ 2015թ. պետական բյուջեից նախատեսված էր ներդնել 1257.7 մլն.դրամ:

Հայաստան Համահայկական Հիմնադրամի միջոցներով նախատեսված էր ավարտին հասցնել 2014թ. մեկնարկած Վարդենիս – Մարտակերտ կմ12+910 – կմ13+650 հատվածի /Մ-11 Մարտունի – Վարդենիս – ԼՂՀ սահման/ միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները, որի համար կատարվող ներդրումը 2015թ. կազմելու էր 118.0 մլն. դրամ:

2015թ. ճանապարհաշինության ոլորտի կարիքներով նախատեսված էր իրականացնել Մ-14 Մ4 – Շորժա - Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի 60-73-րդ կմ /Ծափաթաղ – Արեգունի 13կմ/ հատվածի հիմնանորոգում, մարզային նշանակության Մարտունի – Վաղաշեն - Վարդենիկ 1.6 կմ, Երանոս - Ծակքար 2.7 կմ, Մ-10 - Լճափ 1.0 կմ, Մ-14 – Նորակերտ 1.0 կմ, Մ-11 – Ծովակ – Լճավան -Ախպրաձոր 13.2 կմ, Մ-11 -

Նորաբակ 4.0 կմ, Մ-11 - Խաչաղբյուր - Ակունք 2.0 կմ, Սևան - Վարսեր 2.0 կմ, Մ-10 - Չկալովկա 0.5 կմ, Սևան – Ախթամար համալիր - Մ-4 /Սևան – Գոմաձոր հատված/ 5.0 կմ, Մ-14 - Շորժա 1.2 կմ, Մ-14 - Ջիլ 2.7 կմ ճանապարհահատվածների ասֆալտապատման և Հ-30 - Կալավան 7.0 կմ և Հ-30 - Անտառամեջ 4.3 կմ ճանապարհների կոպճապատման աշխատանքները, սակայն դրանք ճանապարհաշինական ծրագրում չեն ներառվել:
Վերոհիշյալ ծրագրերը ամբողջ ծավալներով և ժամկետներում իրականացվելուց հետո մարզում ճանապարհային ցանցի վիճակը զգալիորեն կբարելավվեր:
Վերոհիշյալ աշխատանքների իրականացման ընթացքում հիմնանորոգման ժամանակ կատարվել են փոսային նորոգման, ջրահեռացման ցանցի, մայթերի և ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ, իսկ վերանորոգման և սպասարկման ժամանակ՝ նաև կոպճապատման և հողային հարթեցման աշխատանքներ:

**5.3.2 Իրականացման առաջընթացը**

**Աղյուսակ 17.**

**ՄԶԾ-ով 2015 թվականի ճանապարհաշինության ոլորտի կարիքները և իրատեսական բյուջեն**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | ՄԶԾ-ով նախատեսված 2015թ. կարիքները /մլն. դրամ/ | 2015թ.իրատեսական պլանավորված բյուջե /մլն. դրամ/ | 2015թ.հունվար-դեկտեմբեր ամիսներին կատարված փաստացի ներդրումը /մլն. դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Միջպետական և հանրապետական ճանապարհների հիմնանորոգում /ՀՀ պետական բյուջե, Համաշխարհային բանկ/ | 1953.7 | 618.0 | 617.0 |
| 2 | Մարզային և համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգում /ՀՀ պետական բյուջե, Համաշխարհային բանկ/ | 3923.0 | 0 | 658.2 |
| 3 | Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում /ՀՀ | 520.0 | 659.1 | 659.1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պետական բյուջե/ | | | |
| 4 | Մարզային և համայնքային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում /ՀՀ պետական բյուջե/ | 93.9 | 98.6 | 92.4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **6490.6** | **1375.7** | **2026.7** |

Այսպիսով 2015թ. մարզում ճանապարհաշինության բնագավառում ՄԶԾ-ով նախատեսված կարիքները կազմել են 6490.6 մլն. դրամ, իրատեսական պլանավորված բյուջեն կազմել է 1375.7 մլն.դրամ: Իրականացված քաղաքականության արդյունքում տարվա վերջի դրությամբ ՀՀ պետական բյուջեով, Հայաստան Համահայկական Հիմնադրամի և Համաշխարհային բանկի միջոցներով կատարվել է 2026.7 մլն. դրամի փաստացի ներդրում: Ֆինանսական առումով 2015թ. փաստացի ներդրումը ՄԶԾ-ով նախատեսված կարիքների համեմատ կազմել է 31.2%, իսկ իրատեսական պլանավորված բյուջեի համեմատ կազմել է 147.3%, կամ ավել է 651.0 մլն. դրամով: Նշված աճը հիմնականում պայմանավորված է մարզային և համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգմամբ: Նախատեսված բոլոր ծրագրերը տարվա վերջի դրությամբ ամբողջությամբ ավարտվել են:

**Իրականացված միջոցառումները հետևյալն են՝**

2015թ. իրականացված քաղաքականության արդյունքում տարվա վերջի դրությամբ արձանագրվել է որոշակի ձեռքբերումներ՝ այն է

ա/ <u>ՀՀ 2015թ. պետական բյուջեով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝</u>

ՀՀ 2015թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզում բացի ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներից կատարվել են 5.5 կմ տարբեր ճանապարհահատվածների ասֆալտապատման աշխատանքներ, այն է՝

-Հիմնանորոգվել է Մ10-Գավառ-Մ10 հանրապետական նշանակության ավտոճանապարհի 4.0 կմ հատվածը: Աշխատանքները կատարվել են <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ կողմից, /պատվիրատու ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ԾԻԳ>>ՊՀ/, որի արդյունքում ծախսվել է 384.5 մլն.դրամ: Կատարվել է ջրահեռացման ցանցի կառուցման,հիմքի տեղադրման, փոսային նորոգման, կահավորման և միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ:

-Հիմնանորոգվել է Մարտունի քաղաքի Մամիկոնյան փողոցի 0.46 կմ հատվածը: Աշխատանքները կատարվել են <<Կապավոր>> ՍՊԸ կողմից, /պատվիրատու ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան/, որի արդյունքում ծախսվել է 59.3 մլն.դրամ: Կատարվել է մայթերի և ջրահեռացման ցանցի կառուցման, խճային հիմքի և միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ:

-Հիմնանորոգվել է Սևան քաղաքի Նաիրյան փողոցի շուրջ 800 գծամետր հատվածը: Աշխատանքները կատարվել են <<Ավտոճանապարհային մեքենաներ>> ՍՊԸ կողմից, /պատվիրատու ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան/, որի արդյունքում ծախսվել է 102.7

մլն.դրամ: Կատարվել է գոյություն ունեցող եզրաքարերի վերանորոգման, փոսային նորոգման, ջրահեռացման ցանցի և միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ:
-Ասֆալտապատվել է Ձորագյուղ համայնքի փողոցի 240 գծամետր հատվածը: Աշխատանքները կատարվել են <<Կապավոր>> ՍՊԸ կողմից, /պատվիրատու ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան/, որի արդյունքում ծախսվել է 24.7 մլն.դրամ: Կատարվել է խճային հիմքի և միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ:

Բացի պետական բյուջեից մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումներ են կատարվել նաև Համաշխարհային բանկի և Հայաստան Համահայկական հիմնադրամի ծրագրերով:

բ/ <u>Համաշխարհային բանկի ծրագրով</u> 2015թ. մարզում հիմնանորոգվել են 4.2 կմ հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհներ, այն է՝
-Հիմնանորոգվել է Սևան-Վարսեր մարզային նշանակության ավտոճանապարհի 2.7կմ հատվածը, ինչպես նաև Սևան քաղաքի Վլադիմիր Կարապետյանի հրապարակը և Կարմիր բանակի փողոցի 330 գծամետր հատվածը: Աշխատանքները կատարվել են <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ կողմից /պատվիրատու ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ԾԻԳ>>ՊՀ/: Իրականացվել են ջրահեռացման ցանցի և մայթերի կառուցման, հիմքի և միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման, ինչպես նաև ճանապարհի կահավորման աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 471.5 մլն.դրամ:
-Հիմնանորոգվել է Մ4-Սևան-Մ4 հանրապետական նշանակության ավտոճանապարհի 1.1կմ հատվածը: Աշխատանքները կատարվել են <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ կողմից /պատվիրատու ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ԾԻԳ>>ՊՀ/: Իրականացվել են մայթերի կառուցման, հիմքի և միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման, ինչպես նաև ճանապարհի կահավորման աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 114.1 մլն.դրամ:

գ/ <u>Հայաստան Համահայկական հիմնադրամի</u> միջոցներով 2015թ. վերսկսվել է Վարդենիս-Մարտակերտ միջպետական նշանակության ավտոճանապարհի ՀՀ Գեղարքունիքի մարզում գտնվող 740 գծամետր հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Աշխատանքները կատարվել են <<Կապավոր>> ՍՊԸ կողմից /պատվիրատու Հայաստան Համահայկական հիմնադրամ/: Իրականացվել են հիմքի և 0.74 կմ երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 118.4 մլն.դրամ:

Ընդհանուր առմամբ 2015թ. մարզի տարածքում ՀՀ պետական բյուջեով, Համաշխարհային բանկի և Հայաստան Համահայկական հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել են 10.5 կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, ինչի արդյունքում ներդրվել է 1275.2 մլն. դրամ:

դ/ <u>Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանություն</u>

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը միջպետական և հանրապետական նշանակության, իսկ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը որոշ տեղական /մարզային/ նշանակության ճանապարհների վրա որպես պատվիրատու թվով 5 ճանապարհաշինական կազմակերպությունների միջոցով կատարել են ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ:

2015թ. հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը և նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ձմեռային պահպանության է ենթարկվել 385.9 կմ

միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ: Նույն ժամանակահատվածում ձմեռային պահպանության է ենթարկվել 152.7 կմ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ: Հաշվետու ժամանակահատվածում բոլոր ճանապարհները բաց են եղել, բացի բարձր լեռնային համարվող Սելիմի լեռնանցքից, Այրք, Ախպրաձոր, Նորաբակ, Գեղաքար և Մադինա համայնքներ տանող առանձին ճանապարհահատվածներից, որոնք երբեմն փակվել են ուժեղ ձնաբքերի և ձյան առատ տեղումների պատճառով:

2015թ. ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 15-ը կատարվել են միջպետական և հանրապետական նշանակության 357.2 կմ ավտոճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքներ: Նույն ժամանակահատվածում կատարվել են նաև մարզային և համայնքային նշանակության 73.9 կմ ավտոճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքներ:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության նպատակով ՀՀ 2015թ. պետական բյուջեից ներդրվել է 659.1 մլն. դրամ, իսկ մարզային նշանակության ճանապարհների պահպանության նպատակով 92.4 մլն. դրամ:

Աղյուսակ 13. Ճանապարհաշինության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

| Արդյունք | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | Փաստացի |
|---|---|---|---|
| Ճանապարհները մարզում բարելավվել են | 1.1 Նորոգված միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների երկարությունը /կմ/ | 17.9 | 5.8 |
| | 1.2 Նորոգված մարզային և համայնքային նշանակության ճանապարհների երկարությունը /կմ/ | 48.2 | 4.7 |
| | 1.3 Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների երկարությունը | 357.2/385.9 | 357.2/385.9 |
| | 1.4 Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա մարզային և համայնքային նշանակության ճանապարհների երկարությունը | 73.9/152.7 | 73.9/152.7 |

Ծանոթություն. -*1.3 և 1.4 կետերում նշված թվերի համարիչը ցույց է տալիս ընթացիկ պահպանման /գարուն-ամառ-աշուն/ ծավալները, իսկ հայտարարը ձմեռային պահպանության աշխատանքների ծավալները:

### 5.3.3 Խնդիրներ

Մարզի տարածքում կատարվող ճանապարհաշինական աշխատանքների կատարման ժամանակ առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ:

ա/ Այն ժամանակ երբ արդեն պետք է մեկնարկեին շինարարական աշխատանքները, /ապրիլ, մայիս, հունիս/ բավականին երկար ժամանակով սկսվեցին անձրևային եղանակները, իսկ նոյեմբեր ամսին ցուրտ եղանակային պայմանները խոչընդոտ հանդիսացան աշխատանքների ժամանակին ավարտմանը:

բ/ Հաշվետվություններ նախապատրաստելու և վերլուծություններ կատարելու համար մեծ խոչընդոտ է հանդիսանում այն, որ բացի մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվող աշխատանքներից պատվիրատու և կապալառու կազմակերպությունները /այդ թվում ծրագրերի իրականացման գրասենյակները/ մարզում իրենց կողմից իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների ծավալների և կատարված ներդրումների մասին տեղեկատվություն չեն ներկայացնում մարզպետարան:

Միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ ծրագրերով մարզում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքներին մարզպետարանը երբեմն տեղեկացված չի լինում, ուստի պատրաստած հաշվետվությունները երբեմն չեն արտացոլում վերջնական տվյալներ:

#### 5.3.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ ծրագրերով մարզում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների մասին կառուցապատողները մարզպետարան յուրաքանչյուր կիսամյակ պետք է ներկայացնեն տեղեկատվություն կատարված շինարարական աշխատանքների մասին:
Արդյունավետ մոնիտորինգ իրականացնելու համար անհրաժեշտ է կանոնակարգել մարզպետարանին պատվիրատու և կապալառու կազմակերպությունների կողմից տեղեկատվության տրամադրումը՝ ապահովելով դրա պարբերականությունը ու ամբողջականությունը:

## 5.4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

### 5.4.1 Քաղաքականության վերլուծություն

2015 թվականի ընթացքում ավարտվել են ք.Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի վերակառուցման, Հայրավանք համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և գ.Ն.Գետաշենի նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքները:
ՀՀ 2015թ. պետական բյուջեով հատկացված միջոցների շրջանակներում ավարտվել են ք.Գավառի թատրոնի շինարարական և Սևան քաղաքի N 1 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

**Աղյուսակ 19**
***2015 թվականի ՄԶԾ-ով նախատեսված կրթության, մշակույթի, մանկապարտեզների իրատեսական բյուջեն***

| հ/հ | Նախատեսված միջոցառումներ | 2015թ. ՄԶԾ-ով նախատեսված կարիքները /մլն. դրամ./ | 2015թ. Նախատեսված իրատեսական բյուջե /մլն. դրամ/ | 2015թ.տարեկան փաստացի ներդրումը /մլն. դրամ/ |
|---|---|---|---|---|
| | ***Կրթական օբյեկտների*** | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ***հիմնանորոգում<br>այդ թվում*** | ***1034.4871*** | ***415.8136*** | ***359,0041*** |
| **1.** | ք.Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի վերակառուցում **/ՀՀ պետ,բյուջե/** | 261.0571 | 261.0571 | 261,0571 |
| **2.** | Հայրավանքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում **/ՀՀ պետ,բյուջե/** | 76.2331 | 94.7565 | 43,884 |
| **3.** | Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի վերանորոգում **/ՀՀ պետ,բյուջե/** | 120.0 | 60.0 | 0.0 |
| **4.** | Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոց **/ՀՀ պետ,բյուջե/** | 40.0 | 0.0 | 0.0 |
| **5.** | Ջուլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոց **/ՀՀ պետ,բյուջե/** | 140.0 | 0.0 | 0.0 |
| **6.** | Սևանի ավագ դպրոց /թիվ 1 մ/ դպրոց/ **/ՀՀ պետ,բյուջե/** | 70.0 | 0.0 | 0.0 |
| **7.** | Սևանի թիվ 1 հիմնական դպրոց **/ՀՀ պետ,բյուջե/** | 70.0 | 0.0 | 54,063 |
| **8.** | Ն.Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց **/ՀՀ պետ,բյուջե/** | 92.1969 | 0.0 | 0,0 |
| **9.** | Ծովակի միջնակարգ դպրոց **/ՀՀ պետ,բյուջե/** | 130.0 | 0.0 | 0,0 |
| **10.** | Դպրաբակի միջն դպրոց **/ՀՀ պետ,բյուջե/** | 35.0 | 0.0 | 0,0 |
| | ***Մշակույթի օբյեկտների շինարարություն<br>այդ թվում*** | ***115.0*** | ***115.0*** | ***115.0*** |
| **1.** | ք.Գավառի թատրոնի շենքի կառուցման ավարտում **/ՀՀ պետ,բյուջե/** | 115.0 | 115.0 | 115,0 |
| | ***Նախադպրոցական օբյեկտների շինարարություն*** | ***219.8129*** | ***219.8129*** | ***219.8129*** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **1.** | գ.Ն.Գետաշենի նոր մանկապարտեզի կառուցում **/ՀՀ պետ,բյուջե/** | 219.8129 | 219.8129 | 219,8129 |
| | **Բազմաբնակարան շենքերի վերանորոգում** | **160.0** | **0.0** | 0,0 |
| | **Սողանքային գոտում գտնվող վթարային շենքերի բնակիչների բնակարանային պայմանների բարելավում** | **80.0** | **0.0** | 0,0 |
| | **Ինժեներական փաստաթղթերի ձեռքբերում** | **40.0** | **0.0** | 0,0 |
| | **Աղբաթափման վայրերի պայմանների բարելավում** | **40.0** | **0.0** | 0,0 |
| | ***ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 766-Ն որոշում*** | | ***203,11*** | ***203,11*** |
| | Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում | | 29,17* | 29,17 |
| | Արեգունի համայնքի համայնքային կենտրոնի կառուցում | | 14,01* | 14,01 |
| | Դրախտիկ համայնքի համայնքային կենտրոնի կառուցում | | 13,21* | 13,21 |
| | Ծովագյուղ համայնքի մշակույթի տան վերանորոգում | | 24,18* | 24,18 |
| | Ն.Գետաշեն համայնքի ոռոգման համակարգի կառուցում | | 35,36* | 35,36 |
| | Գեղամավան համայնքի մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցում | | 6,98* | 6,98 |
| | Լճափ համայնքի միջն դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում | | 9,69* | 9,69 |
| | Վարդենիս քաղաքի բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում | | 23,96* | 23,96 |
| | Ճանբարակ համայնքի բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում | | 46,55* | 46,55 |
| | **Ընդամենը** | **1689.3** | **953,7365** | **896,927** |

**Ծանոթություն:**
2015թ ՄԶԾ-ով կարիքները գնահատվել են 1689,3 մլն դրամ, իսկ իրատեսական պլանավորված բյուջեն տարեսկզբին կազմել է 750,626 մլն դրամ: ՀՀ կառավարության

2015թ հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ծրագրերի իրականացման համար հատկացվել է 203,11 մլն դրամ: Իրատեսական պլանավորված բյուջեն կազմել է 953,7365 մլն դրամ:

2015թ ընթացքում իրականացված փաստացի ներդրումը կազմում է 896,927 մլն դրամ, որը իրատեսական պլանավորված բյուջեի նկատմամբ կազմում է 94,0 %, իսկ ՄԶԾ-ով գնահատված կարիքների նկատմամբ՝ 53,0 %:

**Աղյուսակ 20.**

***Քաղաքաշինության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում***

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշ | Թիրախը | Փաստացի 2015թ. |
|---|---|---|---|
| **Ոլորտային նպատակ՝** Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը | | | |
| **1.Դպրոցի շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում** | | | |
| **Միջոցառումներ** **1.1** Դպրոցական շենքերի վերանորոգում | Վերանորոգված դպրոցների թիվը | 15 | 4 |
| **1.2** Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում | Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակների թիվը | 6 | 0 |
| **1.3** Ջեռուցման լոկալ համակարգերի ներդրում | Ջեռուցման լոկալ համակարգեր ունեցող դպրոցների տեսակարար կշիռը<br><br>Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում աշկերտների թիվը 2854 | 5 | 0 |
| **2.Մարզական, մշակույթային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվացների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում** | | | |
| **Միջոցառումներ** **2.1** Մարզական, մշակույթային և արտադպրոցական հաստատությունների | Վերանորոգված մարզական, մշակույթային և արտադպրոցական հաստատությունների | 3 | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում | թիվը | | |
| **3.Կրթության համակարգերի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում** | | | |
| **Միջոցառումներ**<br>**3.1** Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում | Վերանորոգված մանկապարտեզների թիվը | 1 | 1 |
| **4.Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման բարեփոխումներին և վարչական շենքերին ուղղված միջոցառումներ** | | | |
| **4.1** Բազմաբնակարան և վարչական շենքերի պայմանների բարելավում | Վերանորոգված օբյեկտների թիվը | 12 | 3 |
| **5. Սողանքային գոտում գտնվող բնակիչների բնակարանային խնդիրների լուծում** | | | |
| **5.1** Սողանքային գոտում գտնվող բնակարանային պայմանների բարելավում | Վերանորոգված բնակարանների թիվը | 41 | 0 |
| **6. Ընդհանուր բնույթի նախագծա-նախահաշվային, երկրաբանահետախուզական, գեոդեզիական և քատեզագրման աշխատանքներ** | | | |
| **6.1**Ինժեներական փաստաթղթերի ձեռքբերում | Ինժեներական փաստաթղթերի թիվը | 18 | 0 |
| **7.Աղբավայրերի շինարարություն** | | | |
| **7.1** Աղբաթափման վայրերի պայմանների բարելավում | Կառուցված աղբավայրերի թիվը | 5 | 0 |

### 5.4.2 Խնդիրները

Մարզի տարածքում նախատեսված հիմնանորոգման աշխատանքների կատարման ժամանակ առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ:

ա/Հաշվետվություններ նախապատրաստելու և վերլուծություններ կատարելու համար մեծ խոչընդոտ է հանդիսանում այն, որ բացի մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվող աշխատանքներից պատվիրատու և կապալառու կազմակերպությունները /այդ թվում ծրագրերի իրականացման գրասենյակները/ իրենց կողմից իրականացվող աշխատանքների ծավալների և ֆինանսների մասին տեղեկատվություն չեն ներկայացնում մարզպետարան:

### 5.4.3 Քաղած դասերը և հետագա քայլերը

Միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ ծրագրերով մարզում իրականացվող աշխատանքների մասին կառուցապատողները մարզպետարան յուրաքանչյուր կիսամյակ պետք է ներկայացնեն տեղեկատվություն:

## VI.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### 6.1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

#### 6.1.1 Քաղաքականության վերլուծություն

**ՄԶԾ գերակակայությունները տարածքային կառավարման ոլորտում և 2014թ. ՏԱՊ-ով կատարված միջոցառումները:**

Հայաստանում տարածքային կառավարման ներկայիս համակարգը նախանշվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Տարածքային կառավարման բնագավառում դեռևս չլուծված խնդիրներից կարևորագույնը մարզպետարանների իրավասությունների ոչ հստակ սահմանումն է: Ներկայումս մարզպետների գործունեությունը հիմնականում կարգավորվում է դեռևս 1997 թվականին ընդունված ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին,, ՀՀ Նախագահի հրամանագրով, որի համաձայն մարզպետներին վերապահված են իրավասություններ տնտեսական և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Տարածքային կառավարման բնագավառում 2015թ.-ի գործունեության կարևորագույն ուղղություններն ըստ առաջնահերթությունների հետևյալներն են.

1) 2015թ. մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման և ՀՀ կառավարության կողմից պետության պատվիրակած լիազորությունների իրականացման համար նոր չափորոշիչներ են մշակվել և սահմանվել:

2) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

3) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը:

Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Պլանավորվող ժամանակաշրջանի համար անրաժեշտ է միջոցներ ձեռնարկել համակարգի հետագա կատարելագործման, քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման, պաշտոնների անձնագրերի հստակեցման և դրանց համապատասխան կադրային ապահովվածության ապահովման ուղղությամբ:

ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում ստեղծված և մարզի 61 համայնքներում ներդրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) համալրված է ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող «Mulberry» համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն իրականացնելու հնարավորություններով: Համացանցի առկայության և էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերելու պարագայում համայնքները ՀԿՏՀ միջոցով պետական կառավարման մարմինների և այլ համայնքների հետ առցանց եղանակով իրականացվում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն: Այդ գործընթացը մարզում շարունակվում է:

2015թ. փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը էլ ավելի արդյունավետ կգործեր եթե համակարգին միանային նաև մարզի բոլոր համայնքները, այնպես էլ մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները և ստորաբաժանումները:

Տարածքային զարգացման անհամաչափությունների պատճառներից է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում մեծ թվով փոքր և թույլ կարողություններով համայնքների առկայությունը: Համայնքներում վարչական կարողությունների ցածր մակարդակն ու վարչական մասնատումը նվազեցնում են տեղական իշխանությունների գործունեության արդյունավետությունը:

Այդ համայնքները որպես կանոն չունեն իրենց լիազորությունները ամբողջ ծավալով կատարելու և վիճակի չեն օրենքով սահմանված ծառայությունները համայնքների բնակչությանը պատշաճ որակով մատուցել: Այս առումով անհրաժեշտ է համայնքների խոշորացումը և միջհամայնքային միավորումների ստեղծումը:

### 6.1.2 Իրականացման առաջընթաց

**Աղյուսակ 23.**
**2015թ. ընթացքում ՄԶԾ-ով իրականացված տարածքային կառավարման ոլորտների բյուջեն**

| Հ/Հ | Ծրագրի անվանումը | 2015թ. ՄԶԾ-ով նախատեսված կարիքները մլն.դրամ | 2015թ. նախատեսված իրատեսական բյուջեն մլն.դրամ | 2015թ. տարեկան |
|---|---|---|---|---|
| 1. | Քաղաքացիական ծառայություն/Պետ.բյուջե/ | 10.0 | 1.1 | 1.1 |
| | **Ընդամենը** | **10.0** | **11.0** | **1.1** |

Ծանոթություն՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծախսերի համար նախատեսված իրատեսական բյուջեն կազմում է 1,1 մլն. դրամ: Ծախսվել է 1.1 հազ. դրամ:

### 6.1.3 Իրականացված միջոցառումներ

2015 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է վարչական վերահսկողության դասընթացներ: Վերապատրաստվել են 8-ը քաղաքացիական ծառայողներ:

2015 թվականի ընթացքում մարզի դպրոցների պետական կառավարման խորհուրդների կազմում ընդգրկվել են մարզպետարանի աշխատակիցներ:
2015 թվականի ընթացքում մարզի համայնքների համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվել են յուրաքանչյուր համայնքի համար 3 մարզպետարանի ներկայացուցիչներ:
2015 թվականի ընթացքում համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացները վերահսկվում է մարզպետարանի կողմից:

**Աղյուսակ 24.**
**2015թ. տարեկան մարզպետարանի փաստացի ծախսված գումարները** /հազ.դրամ/

| Հ/Հ | Միջոցառումների անվանումը | 2015թ նախատեսված | 2015թ |
|---|---|---|---|
| | | | տարեկան |
| 1 | Մարզպետարանի աշխատակազմի՝ՀՀ պետ. բյուջեով նախատեսված . պահպանման ծախսեր | 670680.6 | 656287.2 |

1.Մարզպետարանի պահպանման միջոցառումներ: Մարզպետարանի աշխատակազմի պահպանման համար տարեկան նախատեսվել է 670680.6 գումար, 2015թ. ընթացքում ծախսվել է 656287.2 դրամ:

**Աղյուսակ 25. Տարածքային կառավարման ոլորտի արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | **2015թ** տարեկան |
|---|---|---|---|---|
| **1** | **Ոլորտային նպատակ՝** Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում | Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում<br>Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում | ՀՀ կառավարության 18 դեկտեմբերի 2008թ. 51 արձանագրություն<br>,,Համայնքների խոշորացում,, | Գործողության մեջ է |
| **2** | **Արդյունք 1.** Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում | | ՀՀ կառավարության 2011թ. թիվ 505 –Ն որոշում | գործողության մեջ է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *3* | ***Միջոցառումներ***<br>**1.1** Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների յուրացում<br>**1.2** Մարզպետարանում աշխատող քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման ապահովում | 2015թ. նախատեսվել է վերապատրաստվել 47 քաղաքացիական ծառայող: | 47 | 47 |
| | **Արդյունք 2.** Մարզպետարանի վերափոխված կառավարման կազմակերպական կառուցվածք | Մոնիտորինգի և գնահատման աշխատանքների համակարգման և ՄԳ հաշվետվությունների ամփոփման նպատակով | | |
| | ***Միջոցառումներ***<br>**2.1** Համապատասխան կարգավորող որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը | | | |
| | **Արդյունք 3.** Սոցիալական ծառայությունների ապակենտրոնացում | 3.1 Մարզպետարանի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունները կփոխանցվեն համայնքներին | ՀՀ կառավարության կողմից փորձնական ծրագրի իրականացման ընթացք | |
| | ***Միջոցառումներ***<br>**3.1** ՀՀ օրենսդրական բարեփոխումների իրագործում, համայնքներին համապատասխան տեղեկատվության տրամադրում | | | |
| | **Արդյունք 4.** Մարզի բոլոր քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում ինտերնետային կենտրոնների ստեղծում, դրանց տեխնիկական | Գործող ինտերնետ կենտրոնների թիվը մարզի քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում<br>39 | 39 | 22 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | միջոցներով և ինտերնետով ապահովում | | | |
| | ***Միջոցառումներ***<br>**4.1** Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում,<br><br>**4.2** Համապատասխան կազմակերպություններ ի հետ պայմանագրերի կնքում,<br><br>**4.3** Հանրակրթական դպրոցների հետ կազմակերպական աշխատանքների իրականացում: | Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով | 126 | 126 |
| | **Արդյունք 5.** Մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում | Միասնական տեղեկատվական ցանցում ընդգրկված համայնքների թիվը 61 | 61 | 92 |
| | ***Միջոցառումներ***<br>**5.1** Համապատասխան տեխնիկական ապահովում,<br>**6.2** Ծրագրային ապահովում,<br>6.3 Կադրերի վերապատրաստում | Ծրագրային ապահովում և վերապատրաստում անցել են 4-ը | Մարզպետարանում և համայքների մեծ մասում գոյություն ունեն համակարգիչներ<br>3<br><br>4 | 2<br><br>2 |
| | **Արդյունք 6.** Մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հարաբերությունների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բարելավվում | | | |
| | ***Միջոցառումներ***<br>**6.1** Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնցով կարգավորվում են պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունն երը: | | | |

**6.1.4 Խնդիրներ**

Մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանցի ստեղծումը արագ և հասանելի է դարձել համայնքների իրազեկությունը, ինչպես նաև հիմք է հանդիսանում հետագայում էլեկտրոնային խորհրդակցությունների անցկացման համար:

**6.1.5Քաղած դասեր և հետագա քայլեր**

Տարածքային կառավարումը կարևորագույն ոլորտ է և որոշիչ նշանակություն ունի բոլոր ծրագրերի ու միջոցառումների իրականացման համար, քանի որ մարզի ղեկավարությունն է համակարգում մարզի զարգացման ծրագիրը :
Մարզպետարանի կարողությունների զարգացման միջոցառումները նպատակ են ունեցել բարելավելու աշխատողների փորձը, աշխատատեղերը զինելու ժամանակակից սարքավորումներով, կապի միջոցներով և գույքով, ինչը նպաստել է մարզպետարանի աշխատակիցների հնարավորությունների ընդլայնմանը: Ցանկալի է, որ այս միջոցառումը շարունակական լինի, քանի որ մարզպետարանի աշխատատեղերը դեռևս լիովին հագեցած չեն ժամանակակից սարքավորումներով ու կապի միջոցներով:

## 6.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

### 6.2.1 Քաղաքականության վերլուծություն

**ՄԶԾ գերակայությունները տեղական ինքնակառավարման ոլորտում և 2015թ. ՏԱՊ-ով կատարված միջոցառումները:**

Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակը ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, որը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Այն նախատեսված է նաև ԿԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական

աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգարվվել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները:

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների, ինչպես նաև համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

Տեղական ինքնակառավարման բնագավառի 2015թ.-ի գերակայություններն են.

1) ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը.
2) սերտորեն համագործակցել <<Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն>> ՀԿ հետ բոլոր համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրմանը.
3) նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը.
4) մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերվել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

Տեղական ինքնակառավարման համակարգի կենսագործունեությունը էապես պայմանավորված է համայնքային ծառայության համակարգի արդյունավետ իրականացմամբ: 2015 թվականին՝ համաձայն օրենսդրության պահանջների, կազմակերպվել է համայնքային ծառայողների վերապատրաստումը, որին հետևել է նրանց հերթական ատեստավորումը: Համայնքային ծառայողների ատեստավորման և մրցույթային հանձնաժողովներին ապահովվել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և համակարգչային ծրագրերով: Համայնքային ծառայության համակարգի աշխատանքների ապահովման համար իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1) խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը փոփոխելու և հաստատելու ուղղությամբ.

2) համայնքներին ապահովվել է համապատասխան տեխնիկական միջոցներով և համակարգչային ծրագրերով:

2015 թվականին բարձրացվել է ՏԻՄ-երի կարողությունները՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

2015 թվականին մարզի համայնքների 95%-ից ավելին ապահովված են ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով: Համակարգչին տիրապետելու հմտությունները ներառվել են համապատասխան համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում:

### 6.2.2 Համայնքային զարգացման ծրագրեր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2015 թվականին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա: 2015 թվականին ֆինանսական սուղ հնարավորությունների հետևանքով չեն մշակվել համայնքի զարգացման ծրագրերի միասնական մեթոդաբանական ուղեցույցներ, որոնց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը համապատասխանեցվել են միասնական կառուցվածքային չափանիշներին: Անհրաժեշտ էր կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, որին պետք է մասնակցեին ՏԻՄ-երի համապատասխան ծառայողները, սակայն չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթը, նպատակահարմար էր, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, սակայն հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցներով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները: Այս ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

Վերոհիշյալ բոլոր ուղղություններն էլ ներառված էին 2015 թվականի աշխատանքային պլանի տրամաբանական հենքում, սակայն շատ միջոցառումներ, որոնք պահանջում էին ֆինանսական միջոցներ չեն իրականացվել:

***Աղյուսակ 26. ՄԶԾ ծրագրավորվող փարածքային կառավարման և փեղական ինքնակառավարման ոլորփների ֆինանսավորումը 2015թ.(մլն. դրամ) փարեկան ծախսերը***

| ՄԶԾ ոլորտը | Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը | 2015թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի | 2015թ. իրական ներդրումները | 2015թ. տարեկան փաստացի բյուջեն |
|---|---|---|---|---|
| Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում, քաղաքացիական ծառայություն | 1/Համայնքային ծառայողների վերապատրաստում /Պետ.բյուջե/ 2,8 մ | 10.0 | 5.7 | 2.0 |
| | 2/ ՏԻՄ համայնքի ղեկավար և ավագանի/Պետ.բյուջե/ | | 0.750 | 0.750 |
| | 3Քաղաքացիական ծառայություն/Պետ.բյուջե | | 1.1 | 1.1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Համայնքների ֆոդային բյուջեներով նախատեսված կապիտալ ներդրումներ | | 496.100 | 1359,037 | 931.738 |
| **Ընդամենը** | | **506.1** | **1366.587** | **935.588** |

**Ծանոթություն.**
Մարզի 2015թ.ՏԱՊ պլանով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը ըստ ոլորտների կազմում է 2015թ. իրական ներդրումների սյունակում նշված 6303677.8 մլն. դրամ, այն մինչև տարեվերջ կազմում է 1359037.0 մլն. դրամ: Գումարի տարբերությունը պայմանավորված է համայնքային բյուջեների ճշգրտման, բյուջեների փոփոխման և տարեկան համամասնությունների հետ: Տեղական ինքնակառավարման ոլորտում 2015թ. տարեկան նախատեսված բյուջեի նկատմամբ ծախսերը կազմում է 68.5%: 2015թ.ՄԶԾ-ի կարիքների համեմատությամբ կատարողականը կազմում է 184.8%:

### 6.2.3 Իրականացման առաջընթացը

Իրականացված միջոցառումները հետևյալն են.
1.Հստակեցվել են հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները.
2.Կազմել են նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ են ձեռնարկվել դրանց մարման ուղղությամբ:
3.Համայնքների աշխատակազմերի աշխատատեղերը վերազինվել են ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով:
4.Ընթացքի մեջ է համայնքների վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորման գործընթացը:
5. ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացման համար վերապատրաստվել են 71 անդամ:
6. 2015թ. վերապատրաստվել են 69 համայնքային ծառայողներ:
7. Մարզի 2015թ.ՏԱՊ պլանով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը ըստ ոլորտների կազմում է 2015թ. իրական ներդրումների սյունակում նշված 6303677.8 մլն. դրամ, այն կազմում է 1359037.0 մլն. դրամ: Գումարի տարբերությունը պայմանավորված է համայնքային բյուջեների ճշգրտման, բյուջեների փոփոխման և տարեկան համամասնությունների հետ: Տեղական ինքնակառավարման ոլորտում 2015թ. տարեկան նախատեսված բյուջեի նկատմամբ ծախսերը կազմում են 368.5%:
8. Հողօգտագործման սխեմաներ: 2015թ. ընթացքում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 20 համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա, որոնք ստացել են դրական եզրակացություն և սահմանված կարգով հաստատվել են համայնքների ավագանիների կողմից:
9. Համայնքների գլխավոր հատակագծեր: 2015թ. ընթացքում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 2 համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծեր, որը սահմանված կարգով հաստատվել է համայնքի ավագանու կողմից:

**Աղյուսակ 27. Տեղական ինքնակառավարման ոլորտի արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | տարեկան |
|---|---|---|---|---|
| | **Ոլորտային նպատակ՝** Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում | 1. Տեղական ինքնակառավարաման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճան 70% | 70 | 50 |
| | | 2. Համայնքային մակարդակում հավաքագրվող հարկեր և տուրքեր, 1% նախորդ տարվա նկատմամբ | 91.4% | 100.2 |
| | **Արդյունք 1.** Համայնքային բյուջեների հավաքագրման ցուցանիշների աճ | 1.1 Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ 10% (% պլանավորված եկամուտների նկատմամբ) | 100,0 | 100.2 |
| | ***Միջոցառումներ*** **1.1** Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները **1.2** Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ: | | 91 | 91 |
| | **Արդյունք 2.** Հողերի գոտիավորման, օգտագործման սխեմաների և բնակավայրի գլխավոր հատակագծերի կազմում | 1.1 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ ունեցող համայնքների թիվը 20 Թիրախ՝ ( 2015-թ.-ին մարզի 20 համայնքներում կկազմվեն հողերի | 20 | 20 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օգտագործման ժամանակավոր սխեմաներ :)<br><br>1.2Մշակված գլխավոր հատակագծեր ունեցող համայնքների թիվը 10<br>Թիրախ՝ (2015թ. մարզի 10 համայնքներում կկազմվեն և կհաստատվեն բնակավայրերի գլխավոր հատակածեր): | 10 | 2 |
| | ***Միջոցառումներ***<br>**2.1** Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում<br>2.2 Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում | | 20<br><br>10 | 20<br><br>2 |
| | **Արդյունք 3.** Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում | 3.1. ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված աշխատատեղերի քանակը, 80%<br>Թիրախ՝ (Աշխատատեղի 90%-ը կապահովվի համակարգիչներով 2014-2015թթ. ընթացքում)<br>3.2. 2015թ. նախատեսվում է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում կվերապատրաստվեն 105 համայնքային ծառայողներ<br>3.3. 2015թ. մարզում կվերապատրաստվեն 195 մարդ<br>Թիրախ՝ (Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների | 65<br><br>15<br><br>69 | 65<br><br>19<br><br>67 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով 2014-2015թթ. մարզում նախատեսվում է վերապատրաստել յուրաքանչյուր տարին շուրջ 80-100 մարդ:)<br>3.4. Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվը 61 | 144<br><br>75<br><br>61 | 17<br><br>71<br><br>61 |
| | ***Միջոցառումներ***<br>**3.1** Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով<br>**3.2** Մարզում համայնքային ուսումնական կենտրոնի հիմնում<br>**3.3** Համայնքների վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորում<br>**3.4** ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով | 2015թ. մարզում կվերապատրաստվեն 80-100 ՏԻՄ-երի ղեկավարներ և ավագանու անդամներ | 75 | 71 |
| | **Արդյունք 4.** Միջհամայնքային միավորումների կարողությունները բարձրացվել են | 4.1. Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված միջհամայնքային միավորումների քանակը 2, 40% | 12% | 41% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ***Միջոցառումներ***<br>**4.1** Միջհամայնքային միավորումներին տեխնիկական աջակցության տրամադրում<br>**4.2** Միջհամայնքային միավորման շենքային պայմանների բարելավում<br>**4.3** Միջհամայնքային միավորումների շրջանակներում աղբահեռացման գործընթաց սկսել<br>**4.4** Միջհամայնքային միավորումների իրավական հիմքերի ամրապնդում | 3 միջհամայնքային միավորումներին ցուցաբերվել է տեխնիկական աջակցություն | 3 | 3 |
| | **Արդյունք 5.** Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի մշակման որակի բարձրացում և համապատասխանեցում մարզային զարգացման ծրագրին | 5.1.ՄԶԾ և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցման դասընթացներին մասնակցած աշխատակազմի թիվը 12<br>5.2.ՄԶԾ-ին համապատասխանեցված համայնքային զարգացման ծրագրերի թիվը 10 | Ֆինանսական միջոցների առկայություն<br><br>Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն | |
| | ***Միջոցառումներ***<br>**5.1**.ՄԶԾ-ի և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում | | | |
| | **Արդյունք 6.** Համայնքային հիմնախնդիրների կարգավորման գործընթացում ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներգրավվածություն | 6.1Հանրային իրազեկման նպատակով պատրաստվող հաղորդումների թիվը 120<br>6.2.Բնակչությանը ուսուցում անցկացնող ՀԿ –ների թիվը 10 յուրաքանչյուր համայնքում տարեկան 2 | Ֆինանսական միջոցների առկայություն<br>Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | անգամ<br>6.3. ՏԻՄ և համայնքի ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը 92 | | |
| | **Միջոցառումներ**<br>**6.1.** Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրության իրազեկում;<br>**6.2**. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում՝ հասարակական կազմակերպություններ ի միջոցով<br>**6.3.** Ավագանու և բնակչության կապի ամրապնդում կողմերի նախաձեռնությամբ և ՀԿ-ների մասնակցությամբ<br>**6.4**. Համայնքներում ՀԿՏՀ-ների և տեղեկատվական տախտակների գործընթացի արդյունավետ կազմակերպում, ինտերնետային կայքէջեր ունեցող համայնքների թվի ավելացում և բարելավում, ինտերնետային կապի հասանելիություն | | Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն<br>91<br>91 | 82<br>92 |
| | **Արդյունք 7.** Հասարակական վերլուծական տեղեկատվական կենտրոնների | Յուրաքանչյուր տարածքում հասարակական վերլուծական կենտրոնների թիվը 1 | Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային | |

<table>
<tr><td></td><td>ստեղծում ՀԿ-ների հիմքի վրա</td><td></td><td>ռեսուրսների առկայություն</td><td></td></tr>
<tr><td></td><td>Միջոցառումներ<br>7.1 Մարզի համայնքների իրավական տեղեկատվական բազայի ստեղծում</td><td></td><td>Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն</td><td></td></tr>
<tr><td></td><td>Արդյունք 8.<br>ՄԶԾ-ների ինստիտուցիոնալ և ՄԳ համակարգերիի արմատավորում</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td>Միջոցառումներ<br>8.1. ՄԶՀ-ների և ՈԱԽ-ների անդամների տեխնիկական առաջադրանքների հաստատում<br>8.2. Առաջնահերթ ծրագրերի ընտրության հստակ չափանիշների մշակում և հաստատում<br>8.3. ՀԿ ցանցի հետ ՈԱԽ-ներում և ՄԶՀ-ում ՀԿ-ների ներկայացուցիչների անդամակցությունը կարգավորող փոխըմբռնման հուշագրի կնքում<br>8.4. ՄԳ համակարգի շարունակականության ապահովում<br>8.5. Հանրային իրազեկման միջոցառումների</td><td>8.1. Հաստատված տեխնիկական առաջադրանքներ<br>8.2 ՄԶՀ-ի համապատասխան որոշում՝ հաստատված մարզպետի կողմից<br>8.3. Փոխըմբռնման հուշագրի կնքում<br>8.4 Տարեկան կտրվածքով իրականացված ՄԳ ուսումնասիրությունների թիվ 2<br>Տարվա ընթացքում պատրաստված ՄԳ հաշվետվությունների քանակ 2<br>8.5. Կիսամյակային և տարեկան հրապարակված հաշվետվությունների թիվը 2015թ.-ին<br>ՄԶԾ-ի արդյունքների և</td><td>Անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են<br>Ֆինանսական միջոցները առկա են<br>Ֆինանսական միջոցները առկա են</td><td></td></tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իրականացում | 2015թ-ի ՄԶԾ-ի ընթացքի մասին իրազեկման միջոցառումների քանակը 4 և տեսակը՝ 2, մարզխորհրդի նիստ 4, մամուլի ասուլիս 2 | | |

**Աղյուսակ 28.**
**ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ֆոնդային բյուջեով նախատեսված տարեկան ծախսերը**

| Հ/հ | Համայնքների անվանում | Ֆոնդային բյուջեով նախատեսված 2015թ-ի ծախսեր /հազ.դրամ/ | Փաստացի 2015 թ. /հազ. դրամ | Հ/հ | Համայնքների անվանում | Ֆոնդային բյուջեով նախատեսված 2015թ. ծախսեր /հազ.դրամ | Փաստացի 2015թ. /հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | | *1* | *2* | *3* | |
| 1 | Ք. Վարդենիս | 2 989.9 | 525.2 | 43 | Կարմիրգյուղ | 36 846.2 | 23 783.3 |
| 2 | Կարճաղբյուր | 6 450.1 | 5 659.2 | 44 | Գանձակ | 16 597.2 | 16 360.3 |
| 3 | Փամբակ | 273.8 | 0.0 | 45 | Սարուխան | 13 000.0 | 12 983.2 |
| 4 | Լճավան | 1 808.1 | 1 808.1 | 46 | Լանջաղբյուր | 5 500.8 | 4 704.8 |
| 5 | Ախպրաձոր | 2 541.0 | 2 541.0 | 47 | Ծովազարդ | 7 351.9 | 7 322.6 |
| 6 | Նորակերտ | 2 823.0 | 2 752.2 | 48 | Նորատուս | 63 616.5 | 62 609.0 |
| 7 | Շատվան | 13 419.8 | 0.0 | 49 | Ք. Ճամբարակ | 12 722.6 | 3 528.9 |
| 8 | Վանևան | 500.4 | 345.0 | 50 | Գետիկ | 36.8 | 0.0 |
| 9 | Տրետուք | 227.4 | -15.3 | 51 | Թթուջուր | 2 263.3 | 1 280.0 |
| 10 | Կութ | 210.3 | 0.0 | 52 | Մարտունի | 0.0 | 0.0 |
| 11 | Ջաղացաձոր | 200.0 | 0.0 | 53 | Վահան | 460.0 | 0.0 |
| 12 | Սոտք | 68 634.7 | 64 677.1 | 54 | Ձորավանք | 0.0 | 0.0 |
| 13 | Արեգունի | 1 202.5 | 620.0 | 55 | Անտառամեջ | 0.0 | 0.0 |
| 14 | Կախակն | 28.8 | -120.3 | 56 | Դպրաբակ | 110.0 | 110.0 |
| 15 | Վ. Շորժա | 1 334.6 | 0.0 | 57 | Ջիլ | 2 000.0 | 450.7 |
| 16 | Ավազան | 100.9 | -239.3 | 58 | Կալավան | 3 966.3 | 0.0 |
| 17 | Դարանակ | 200.9 | 100.0 | 59 | Դրախտիկ | 23 454.7 | 8 915.0 |
| 18 | Ն  Շորժա | 645.0 | 600.0 | 60 | Աղբերք | 256.7 | 254.0 |
| 19 | Շատջրեք | 1 107.7 | 1 063.0 | 61 | Շորժա | 1 604.1 | 1 604.1 |
| 20 | Արփունք | 1 383.2 | 1 383.0 | 62 | Արտանիշ | 5 183.7 | 3 583.0 |
| 21 | Փ. Մասրիկ | 9 178.5 | 4 173.1 | 63 | Այգուտ | 43.2 | 43.2 |
| 22 | Ծափաթաղ | 1 160.5 | 1 159.5 | 64 | Ք. Մարտունի | 42 774.8 | 40 274.6 |
| 23 | Այրք | 1 910.3 | 989.7 | 65 | Ծակքար | 60 327.8 | 19 023.1 |
| 24 | Խաչաղբյուր | 4 552.5 | 88.5 | 66 | Մադինա | 7 469.3 | 6 880.0 |
| 25 | Լուսակունք | 5 746.8 | 4 700.2 | 67 | Արծվանիստ | 18 637.6 | 3 350.0 |
| 26 | Նորաբակ | 485.0 | 0.0 | 68 | Ձոլաքար | 37 028.7 | 36 981.5 |
| 27 | Ազատ | 0.1 | -925.0 | 69 | Վ. Գետաշեն | 38 593.3 | 28 563.8 |
| 28 | Մաքենիս | 1 519.4 | 712.0 | 70 | Աստղաձոր | 21 325.0 | 13 867.1 |
| 29 | Գեղաքար | 0.1 | 0.0 | 71 | Վարդաձոր | 13 198.1 | 13 181.7 |
| 30 | Գեղամաբակ | 5 073.2 | 0.0 | 72 | Ն.Գետաշեն | 109 811.2 | 38 522.8 |
| 31 | Գեղամասար | 509.9 | 309.0 | 73 | Գեղհովիտ | 18 754.5 | 9 945.0 |
| 32 | Կուտական | 300.0 | 0.0 | 74 | Վարդենիկ | 133 631.1 | 71 028.7 |
| 33 | Մ. Մասրիկ | 12 284.5 | 9 491.7 | 75 | Ծովինար | 52 049.4 | 51 843.4 |
| 34 | Ակունք | 18 993.6 | 16 638.5 | 76 | Երանոս | 21 832.0 | 18 956.9 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | Տորֆավան | 430.8 | 428.5 | 77 | Ձորագյուղ | 18 669.9 | 12 109.3 |
| 36 | Ծովակ | 12 261.7 | 11 726.7 | 78 | Ծովասար | 19 477.9 | 16 515.2 |
| 37 | Ք. Գավառ | 68 278.4 | 66 349.7 | 79 | Վաղաշեն | 18 994.7 | 18 844.0 |
| 38 | Լճափ | 5 820.0 | 5 180.4 | 80 | Լիճք | 42 282.4 | 35 165.1 |
| 39 | Ծաղկաշեն | 2 801.8 | 2 251.8 | 81 | Ք. Սևան | 81 509.2 | 76 565.2 |
| 40 | Հայրավանք | 13 047.1 | 4 070.6 | 82 | Չկալովկա | 0.0 | 0.0 |
| 41 | Բերդկունք | 1 403.1 | 1 321.0 | 83 | Վարսեր | 2 055.6 | 1 613.1 |
| 42 | Գեղարքունիք | 9 508.0 | 9 313.1 | 84 | Նորաշեն | 0.0 | -21 932.3 |

| | | | |
|---|---|---|---|
| 85 | Գեղամավան | 5 538.7 | 362.3 |
| 86 | Դդմաշեն | 4 503.5 | 2 898.4 |
| 87 | Սեմյոնովկա | 120.0 | 0.0 |
| 88 | Ծաղկունք | 26 484.2 | 1 869.5 |
| 89 | Ծովագյուղ | 46 750.6 | 46 142.9 |
| 90 | Լճաշեն | 32 193.4 | 17 986.0 |
| 91 | Ջովաբեր | 8 663.2 | 3 972.0 |
| | **Ընդամենը** | **1 359 037.0** | **931 738.8** |

Ծանոթություն: 2015թ-ի տարեկան մարզի համայնքների ֆոնդային բյուջեններով նախատեսված կապիտալ ծախսերը կազմել է 1359037.0 մլն. դրամ, որից ծախսվել է 931738.0 մլն.դրամ՝ կատարողականը կազմում է շուրջ 68.5 %-ով:

### 6.2.4 Խնդիրներ

ՏԻՄ աշխատակազմի գործունեության իրավական հիմքերի ամրապնդում, համայնքային ծառայության օրենքի պահանջները, համայնքային ծառայողների ատեստավորում և դասային աստիճանների շնորհում, թափուր պաշտոններում մրցութային կարգով համայնքային ծառայողների համալրում համապատասխան պաշտոններում:

### 6.2.5 Քաղած դասեր և հետագա և հետագա քայլեր

Համայնքային ծառայության օրենքի ընդունման պահից համայնքային ծառայողները օրենքով պաշտպանված են: Աշխատանքները և հանձնարարականները իրականացնում են իրենց պաշտոնի անձնագրով նախատեսված լիազորությունների շրջանակներում:
Տեղական ինքնակառավարման ոլորտում 2015թ. ընթացքում շարունակվում է միջոցառումների իրականացումը:

## 6.3 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### 6.3.1Քաղաքականության վերլուծություն

**ՄԶԾ գերակայությունները քաղաքացիական հասարակության ոլորտում և 2015թ. ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումները**

1.Մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնության եւ թափանցիկության ապահովման նպատակով 2015 թվականի ընթացքում լայն համագործակցություն է ծավալվել մարզային եւ հանրապետական ԶԼՄ-ների ու մարզի տարածքում գործող որոշ ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ:

2.Հաշվետու ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզպետարանի կայքէջի՝ (gegharkunik.mtaes.am) և մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով կազմակերպվել են հանրային իրազեկման աշխատանքներ՝ մարզպետի, մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների և ՏԻՄ գործունեության, մարզի համայնքներում հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների, դրանց իրականացման ընթացքի ու արդյունքների, մարզի համայնքների տարբեր ոլորտներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

3.Գեղարքունիքի մարզպետարանի կայքէջում՝ (gegharkunik.mtaes.am) տեղադրվել և մարզային ,,Քյավառ,, հեռուստաընկերության միջոցով յուրաքանչյուր շաբաթ լուսաբանվել են Գեղարքունիքի մարզպետի աշխատանքային այցերը մարզի համայնքներ, հրապարակվել են տեղեկատվական բնույթի նյութեր մարզպետի տեղակալների և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային հանդիպումների, կատարած աշխատանքների, մարզպետի կողմից տրված հանձնարարությունների կատարման վերաբերյալ: Պարբերաբար լուսաբանվել են մարզպետի կողմից հրավիրված խորհրդակցություններն ու քննարկումները, քաղաքացիների ամենշաբաթյա ընդունելությունները, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների բնակչության հետ հանդիպում-քննարկումները, որի ընթացքում փորձ է արվել օրենքով սահմանված կարգով հնարավորինս աջակցել քաղաքացիների կողմից բարձրացված տարաբնույթի հիմնախնդիրների կարգավորմանը:

4.2015 թվականի ընթացքում ապահովվել է մարզպետի, նրա տեղակալների եւ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությունը մարզի տարածքում գործող հեռուստաընկերությունների միջոցով կազմակեպվող տարբեր հիմնախնդիրների քննարկմանը, լրատվական բնույթի այլ նյութերի պատրաստմանը:

5.2015 թվականի ավարտին կազմակերպվել է Գեղարքունիքի մարզպետի մամլո ասուլիսը մարզի ԶԼՄ-ների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են տարվա ընթացքում մարզում իրականացված և հաջորդ տարվա անելիքներին վերաբերող հարցեր: Պատրաստվել են մամլո հաղորդագրություններ, տեղեկատվական բնույթի նյութեր, շրջաբերականներ, հիշարժան տարեթվերին նվիրված նյութեր, ուղերձներ և ապահովել դրանց հրապարակայնությունը: Մարզպետարանի ինտերնետային կայքէջում տեղադրվել են նյութեր, կապված մարզի զարգացման ծրագրի, մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

6. Ապահովվել է մարզային եւ հանրապետական ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը մարզխորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրված կլոր սեղաններին, մամլո ասուլիսներին, տարբեր

թեմաների շուրջ կազմակերպվող քննարկումներին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորված մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

7.Ամենօրյա աշխատանք է իրականացվել մարզպետարանի ինտերնետային կայքի թարմացման ուղղությամբ, ժամանակին կայքում տեղադրվել են մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, մարզպետարանի տարեկան աշխատանքային ծրագիրը, մարզպետի տարեկան եւ ընթացիկ հաշվետվությունները, համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները, ամենօրյա աշխատանք է տարվել, որպեսզի կայքի յուրաքանչյուր բաժին և ենթաբաժին ժամանակին համալրվի պահանջվող տեղեկատվությամբ և նյութերով:

8.Աշխատանքներ են տարվել, որպեսզի մարզում բարձր հիմքերի վրա դրվի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությանն ու հրապարակայնության ապահովմանն ուղղված գործընթացները:

9. Կիսամյակի ընթացքում հնարավորության սահմաններում աջակցություն է ցուցաբերվել համայնքային կայքէջերի կանոնավոր գործունեության ուղղությամբ:

10. Հաշվետու ժամանակահատվածում աջակցություն և հետևողական աշխատանք է տարվել, համայնքներ-մարզպետարան էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը (ՀԿՏՀ) օրենքով սահմանված կարգով և ժամանակին գործելու ուղղությամբ:

11.Ուշադրության կենտրոնում է պահվել մարզի բոլոր համայնքներում տեղեկատվական ցուցատախտակների առկայության և դրանք հանրային իրազեկման պահանջ ունեցող տեղեկատվությամբ պարբերաբար թարմացնելու գործընթացը:

12.2015թվականի ընթացքում ըստ ժամկետի և անհրաժեշտության հրապարակվել են բոլոր այն որոշումներն ու հայտարարությունները, որոնք վերաբերել են սահմանամերձ համայնքներին պետության կողմից տրված արտոնություններին, պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից բնակչությանը տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ տեսակի օգնությունների տրամադրմանն ու բաշխմանը:

**Աղյուսակ 27.**

***Քաղաքացիական հասարակություն ոլորտի 2015թ. փարեկան բյուջեն***

| Հ/Հ | *Միջոցառման անվանումը* | ***2015թ. նախատեսված իրատեսական բյուջե*** | ***2015թ.փարեկան փաստացի բյուջե*** |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Մարզի և մարզպետարանի կենսագործունեության հետ առնչվող հիմնախնդիրների լուսաբանման նպատակով Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ յուրաքանչյուր ամիս վճարվել է մարզային ,,Գեղամա,, մեդիա հոլդինգ հեռուստաընկերությանը նկարահանման աշխատանք ներ իրականացնելու, եթեր հեռարձակելու և այլ ծախսերի համար. | **720** | **720** |

## 6.3.2 Իրականացման առաջընթացը

1.Մարզպետարանի ինտերնետային կայք էջի և մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հրապարակվել են նյութեր և հեռարձակվել հաղորդումներ, որտեղ ներկայացվել են մարզպետի, նրա տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, մարզպետի և նրա տեղակալների՝ համայնքներ կատարած աշխատանքային այցերը, քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա հիմնախնդիրները, մարզում հրատապ լուծում պահանջող ծրագրերը, մարզպետարանի ինտերնետային կայքէջում տեղադրվել են մարզպետի գործունեությանը վերաբերող և հրապարակման ենթակա բոլոր նյութերը:
2.Պարբերաբար հրապարակվել են մարզի համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները և հրապարակման անհրաժեշտ պահանջվող այլ նյութեր:
3.Մարզում առկա հիմնախնդիրների, հրատապ լուծում պահանջող հարցերի, իրականացված և իրականացվելիք աշխատանքների հանրային իրազեկման նպատակով մարզպետի, նրա տեղակալների կամ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ տարվա ընթացքում կազմակերպվել են ասուլիսներ, հարցազրույցներ, պարզաբանումներ, թողարկվել կամ հրատարակվել են մարզային և հանրապետական ԶԼՄ-ների միջոցով:
4.Տարվա ընթացքում պատրաստվել են տեղեկատվական բնույթի նյութեր, որոնք անդրադարձել են մարզի տարածքում պետական բյուջեի եւ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրած միջոցների հաշվին իրականացված աշխատանքներին, դրանք թողարկվել են մարզի հեռուստաընկերություններով, տպագրվել մարզային թերթում եւ տեղադրվել մարզպետարանի ինտերնետային կայքում:
5.Մարզի ակտիվ հասարակական կազմակերպությունները և ԶԼՄ-ների ներկայացուցիչները մասնակից են դարձնել մարզպետարանում հրավիրվող մարզային խորհրդի նիստերին, աշխատանքային հանդիպումներին, տարաբնույթ

քննարկումներին: Տարվա ընթացքում պահանջվող տեղեկատվությամբ պարբերաբար թարմացվել է մարզպետարանի ինտերնետային կայքի բոլոր բաժիններն ու ենթաբաժինները:
6. Մարզում գործող ՔԼՄ-ները լուսաբանել են մարզի համայնքների բյուջեների կազմման աշխատանքները:
7. Գեղարքունիքի մարզպետարանը, մարզպետարանի ՏԻՄ վարչության, մարզի եւ հանրապետության տարածքում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հետևողականություն են ցուցաբերել, որպեսզի համայնքների աշխատակազմերը ակտիվացնեն ՀԿՏՀ գործունեությունը, գործի դրվեն համայնքային ինտերնետային կայքերը, համայնքներում ակտիվանա տեղեկատվական տախտակների կանոնավոր գործունեությունը, ապահովվի համայնքների ավագանիների գործունեության հրապարակայնությունը:
8.Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել են հայտարարություններ և տեղեկատվական բնույթի նյութեր՝ մարզ ներկրվող պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուների, ինչպես նաեւ մարզային ենթակայության հիմնարկ ձեռնարկություններում թափուր աշխատատեղերի, Գեղարքունիքի մարզպետի կողմից կազմակերպվող քաղաքացիների ընդունելությունների անցկացման վերաբերյալ:

**Աղյուսակ 28.**

***Քաղաքացիական հասարակության ոլորտի արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում***

| Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշ | Թիրախ | Փաստացի 2015թ. տարեկան |
|---|---|---|---|
| **Արդյունք 1.** Համայնքային մակարդակում ՀԿ-ների և ԶԼՄ-ների դերի բարձրացում | 1.1. Տարբեր հաղորդումների միջոցով հանրության իրազեկման նպատակով պատրաստված հաղորդումների թիվը՝50 | 70 | 70 |
| | 1.2. Բնակչության շրջանում ուսուցում անցկացնող ՀԿ-ների թիվը յուրաքանչյուր համայնքում (տարեկան 2 անգամ) | 2 | 2 |
| | 1.3.Ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը (կիսամյակը մեկ անգամ) | 2 | 2 |
| **Միջոցառումներ** | | | |
| 1.1. Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրային իրազեկում | Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրային իրազեկում | 70 | 70 |
| 1.2. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում հասարակական կազմակերպությունների միջոցով | Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում հասարակական կազմակերպությունների միջոցով | 15 | 13 |
| 1.3.Ավագանու և բանկչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ | Ավագանու և բանկչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ | 6 | 5 |
| **Արդյունք 2.** ՄԶԾ-ների | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ինստիտուցիոնալ և ՄԳ համակարգերի արմատավորում | | | |
| **Միջոցառումներ**<br>2.1. ՄԶՀ-ների և ՈԱԽ-ների անդամների տեխնիկական առաջադրանքների հաստատում | 2.1. Հաստատված տեխնիկական առաջադրանքներ | 1 | 1 |
| 2.2. Առաջնահերթ ծրագրերի ընտրության հստակ չափանիշների մշակում և հաստատում | 2.2. ՄԶՀ-ի համապատասխան որոշում հաստատված մարզպետի կողմից | 1 | 1 |
| 2.3. ՀԿ ցանցի հետ ՈԱԽ-ներում և ՄԶՀ-ում ՀԿ-ների ներկայացուցիչների անդամակցությունը կարգավորող փոխըմբռնման հուշագրի կնքում | 2.3.Փոխըմբռնմամ հուշագրի կնքում | 1 | 1 |
| 2.4. ՄԳ համակարգի շարունակականության ապահովում | 2.4. Տարեկան կտրվածքով իրականացված ՄԳ ուսումնասիրությունների թիվը `տարեկան 2 անգամ | 2 | 2 |
| | Տարվա ընթացքում պատրաստված ՄԳ հաշվետվությունների քանակը՝ 2 | 2 | 2 |
| 2.5. Իրազեկման միջոցառումների իրականացում | 2.5. Կիսամյակային և տարեկան հաշվետվությունների պատրաստում 2015թ-ին | 2 | 2 |
| | 2.6. Պետական բյուջեից և դոնոր կազմակերպություններից ամենամյա մասնակցային մոնիտորինգի միջոցառման անցկացման համար միջոցների ապահովում աղբյուր, (դրամ) | 1 | 1 ՀԿ-ի միջոցով առանց գումարի |
| | 2.7. 2012-2015 թթ-երի ՄԶԾ-ի արդյունքների և 2015թ ՄԶԾ-ի ընթացքի մասին իրազեկման միջոցառումների քանակը՝ 8 և տեսակը, | 8<br>2 | 8<br>2 |

| | | | |
|---|---|---|---|
| | մամուլի ասուլիս՝3, կլոր սեղան՝2, լրատվական բնույթի նյութեր՝ 3 | 3<br>3 | 3<br>3 |

### 6.3.3 Խնդիրներ

Պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից մասնակցային մոնիտորինգի տարեկան միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցների ապահովում ՀՀ պետական բյուջեից:
Ազդեցության գնահատման տարեկան միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցների տարեկան ապահովում ՀՀ պետական բյուջեի միջոցներից:
Ֆինանսական աջակցության դեպքում ՁԼՄ-ները հնարավորություն կունենան հանրությանը իրազեկելու նպատակով ավելի շատ հաղորդումներ պատրաստել ընդգրկելով տարբեր ոլորտներ:

### 6.3.4 Քաղած դասեր և հետագա քայլեր

Ինչպես հանրապետության ողջ տարածքում, Գեղարքունիքի մարզում ևս կանոնավոր քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար դեռևս լուրջ անելիքներ կան: Վերը նշված խնդիրների իրականացումը կօգնի, որպեսզի հասարակությունը մասնակցից վերածվի իրականացնողի: Քաղաքացիական հասարակության ձևավորման հարցում մեծ դեր ունի նաև պետական կառավարման մարմին հասարակական կազմակերպություններ համագործակցությունը: